FRIEDRICH NAUMANN FOUNDATION For Freedom.
Հայաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԳԱՂՈՒԹԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԴԻՍԿՈՒՐՍԸ

Էդգար Վարդանյան և Միքայել Զոլյան

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՏԴ 32
ԳՄԴ 66.0
Վ 301

Հրատարակիչ՝
Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության» հիմնադրամ
41, Աբովյան փողոց, գրասենյակ 11
0009, Երևան, Հայաստան

/freiheit.org/south-caucasus
/FNF Armenia
/FNFArmenia

Հեղինակներ՝
Վարդանյան Է., Զոլյան Մ.

Թարգմանիչ
Եսայան Ս.

Խմբագիր
Մեսրոպյան Ս.

Կապ
service@freiheit.org

Ամսաթիվ
12/2024

Հայաստանի վերաբերյալ ռուսաստանյան գաղութատիրության դիսկուրսը - Վարդանյան Է., Զոլյան Մ.

Սույն հետազոտությունն ուսումնասիրում է քաղաքական գերիշխանության՝ Հայաստանի նեոգաղութացման և գաղութացման ժամանակակից Ռուսաստանի քաղաքականության առանձնահատուկ դեպքը և այն արդարացնելու և պաշտպանելու նպատակով կիրառվող խոսույթները: Այս հրապարակման մեջ բերված՝ ռուս պաշտոնյաների և քարոզիչների ելույթների դիսկուրսի վերլուծությունը ցույց է տալիս, որ Կրեմլի՝ Հայաստանին վերաբերող հռետորաբանությունն ունի թե՛ գաղութացման, թե՛ նեոգաղութացման բնորոշ գծեր՝ իրենց ուրույն առանձնահատկություններով: Այս հրապարակումը ներկայացնում է նաև առաջարկներ՝ Հայաստանում, ինչպես նաև ավելի ընդարձակ հետխորհրդային համատեքստում ռուսաստանյան գաղութացման և նեոգաղութացման հարցը լուծելու համար:

Նշում հրապարակման վերաբերյալ

Սույն հետազոտության հրատարակումը հնարավոր է դարձել Հարավային Կովկասի Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության» հիմնադրամի աջակցությամբ: Հրապարակման մեջ տեղ գտած տեսակետներն ու կարծիքները կարող են չարտացոլել Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության» հիմնադրամի և դրա աշխատակիցների դիրքորոշումը:

Նշումներ սույն հրապարակման օգտագործման վերաբերյալ

Այս հրապարակումը տրամադրված է Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության» հիմնադրամի կողմից՝ բացառապես տեղեկատվական նպատակներով: Այն հասանելի է անվճար և վաճառքի համար նախատեսված չէ: Այն չի կարող օգտագործվել կուսակցությունների կամ ընտրական աշխատողների կողմից՝ ընտրարշավների ընթացքում ընտրական գովազդ անելու նպատակով (օրինակ՝ դաշնային, պետական կամ ՏԻՄ ընտրություններ կամ Եվրախորհրդարանի ընտրություններ):

© Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության» հիմնադրամ, 2024
© Էդգար Վարդանյան, 2024
© Միքայել Զոլյան, 2024

ISBN 978-9939-1-2005-8

Բովանդակություն

1. ԱՄՓՈՓԱԳԻՐ 6

2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 8

3. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ԱԿՆԱՐԿ 11

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԿՐԵՄԼԻ ՀՈՌԵՏՈՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ 20

4.1 Ազդեցություն ունենալու և վերահսկելու պատմական իրավունք 20

4.2 Ռուսաստանը՝ որպես «խաղաղարար» 26

4.3 Տնտեսական կախվածություն 28

4.4 Հակաարևմտյան հռետորաբանություն և աշխարհաքաղաքական բացառիկություն 29

4.5 Երախտամոռության մեղադրանքներ 31

5. ԱՄՓՈՓՈՒՄ 36

6. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 39

7. ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 46

Սույն հետազոտությունը ցույց է տալիս ռուսաստանյան խոսույթի այն հիմնական բաղադրիչները, որոնք Ռուսաստանը կիրառում է Հայաստանում՝ «իր ճիշտն» առաջ տանելու համար: Նյութի կարևորությունը ռուսաստանյան շատ խոսույթների բացահայտման մեջ է, որոնք վերարտադրվում են ամեն օր և այնքան սովորական են դարձել, որ դժվար է դրանք ընկալել որպես գաղութային: Հետաքրքիր է, որ որոշ փոփոխություններով՝ նմանատիպ խոսույթներ հնարավոր է գտնել նաև նախկին խորհրդային այլ երկրներում: Այս փաստաթուղթը նպատակ ունի ավելի լայն խմբերին հնարավորություն տալ վերլուծության ենթարկել ամենօրյա մեդիա բովանդակությունը, որը հեղեղված է նմանատիպ խոսույթներով: Ուսումնասիրությունը լրացնում է Խորհրդային Միությանն ու, մասնավորապես, Ռուսաստանին առնչվող հետգաղութային քննարկումները: Ավանդաբար հետգաղութային ուսումնասիրությունների վերաբերյալ գրականությունը հիմնականում կենտրոնացած է այլ տարածաշրջանների վրա, բայց հարկ է նշել, որ ավելի շատ ուսումնասիրություններ են արվում Ռուսաստանի խորհրդային և հետխորհրդային ժառանգության վերաբերյալ: Այդ տեսակետից Հայաստանին առնչվող թերի ուսումնասիրված թեման ավելի շատ հետազոտական աշխատանք և քննարկումներ է պահանջում: Այս հետազոտության շնորհիվ հեղինակները փորձում են իրենց լուման ներդնել Հայաստանում ռուսական գաղութատիրության մասին բանավեճում: Ի վերջո, մարդիկ կարող են նոր հայացքով վերլուծել Ռուսաստանի քաղաքականության մասին դրսևորումները, որոնք հանդիսանում են ռուսական գաղութային տրամաբանության կողմից վերարտադրված հարացույց:

Արմեն Գրիգորյան
Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության»
հիմնադրամի հայաստանյան
ծրագրերի համակարգող

1. Ամփոփագիր

Այս հետազոտությունը Մոսկվայի հռետորաբանության և քարոզչության վերլուծության միջոցով բացահայտում է Հայաստանի առնչությամբ Ռուսաստանի գաղութային/նեոգաղութային քաղաքականության բնույթը: Ուկրաինայի պատերազմի համատեքստում, Կրեմլի քարոզչությունն առաջ էր մղում այն գաղափարը, որ Ռուսաստանը պայքարում է արևմտյան գաղութատիրության, կայսերապաշտության, գլոբալ գերիշխանության և այլնի դեմ: Հայաստանի դեպքը, որը տասնամյակներ շարունակ խիստ կախված է եղել Ռուսաստանից՝ քաղաքական, ռազմական, տնտեսական և մշակութային ոլորտներում, ցույց է տալիս, որ Կրեմլի քաղաքականությունը հիմնված է գաղութային/նեոգաղութային գերիշխանության հարացույցի վրա:

Կրեմլի ուղերձը Հայաստանին հիմնված է Ռուսաստանի պատմականորեն բացառիկ դիրքի գաղափարի վրա՝ օրինականացնելով Ռուսաստանի գերիշխանությունը, ինչպես նաև Հայաստանին՝ անկախ քաղաքականություն մշակելու խոչընդոտման դեմ ուղղված սպառնալիքների վրա: Այն ներառում է նաև Հայաստանում Ռուսաստանի բացառիկ դերի պնդում (օրինակ՝ աշխարհաքաղաքական այլ դերակատարներ, հատկապես՝ արևմուտքից, իրավունք չունեն Հայաստանում որևէ ներգրավվածություն ունենալ), ինչպես նաև հայերի «երախտամոռության» մեղադրանքներ՝ Ռուսաստանից կախվածությունը նվազեցնելու՝ Հայաստանի փորձերը վկայակոչելիս: Կրեմլի հռետորաբանությունն առաջ է տանում Ռուսաստանի՝ միակ խաղաղարարը (հայ-ադրբեջանական հակամարտության համատեքստում), տարածաշրջանում խաղաղության և անվտանգության ապահովման միակ երաշխավորը լինելու պնդումը, ինչպես նաև Ռուսաստանից Հայաստանի տնտեսական կախվածության արդարացումը, և այն պնդումը, որ այս կախվածությունը շահավետ է Հայաստանի համար: Հայաստանում Կրեմլի նեոգաղութային քաղաքականությունը ներառում է նաև ապատեղեկատվական արշավներ և հակաժողովրդավարական քարոզչություն:

Ռուսաստանի նեոկայսերապաշտական քաղաքականությանն առնչվելու համար կարևոր է հասկանալ Մոսկվայի ընթացիկ քաղաքականության բնույթը, այսինքն՝ դա որակել որպես գաղութային/նեոգաղութային: Միջազգային հանրությունը պետք է օժանդակի Հայաստանի կառավա-

րությանը, մեդիա, քաղաքացիական հասարակությանը և այլ դերակատարների՝ Կրեմլի գաղութային/նեոգաղութային քաղաքականությանը դիմակայելու համար, ներառյալ՝ ապատեղեկատվական արշավներն ու հակաժողովրդավարական քարոզչությունը: Կարևոր է նաև հետխորհրդային տարածքում խթանել ռուսական գաղութատիրության/նեոգաղութատիրության հետազոտություններն ու քննարկումները և, մասնավորապես, դյուրացնել գիտնականների, լրագրողների, ակտիվիստների և սոցիալական մեդիա ինֆլյուենսերների ցանցերի ստեղծումը հետխորհրդային երկրներում, ինչպես նաև հետխորհրդային երկրների, Արևմուտքի և Գլոբալ Հարավի միջև՝ Մոսկվայի նեոկայսերապաշտական քաղաքականության վերաբերյալ տեղեկատվություն տարածելու նպատակով:

2. Ներածություն

Այս հետազոտության մեջ կդիտարկենք քաղաքական գերիշխանության առանձնահատուկ դեպք. Հայաստանի վերաբերյալ ժամանակակից ռուսական նեոգաղութացման և գաղութացման քաղաքականության դեպքը և այն արդարացնելու և պաշտպանելու նպատակով կիրառվող խոսույթները: Ռուսական կայսրության և Խորհրդային Միության հետ առնչվող շատ դեպքերի նման՝ այս դեպքը մինչ այժմ հիմնականում վրիպել է գաղութացման և հետգաղութացման հարցերով զբաղվող գիտնականների ուշադրությունից: Պատմականորեն, երբ սոցիոլոգներն ու գիտնականներն սկսել են տեսականացնել և ուսումնասիրել գաղութացման և հետգաղութացման երևույթները, հեղինակների մեծամասնությունն իր ուշադրությունը բևեռել է Արևմտյան Եվրոպայի գաղութարար կայսրությունների (ինչպես նաև՝ ԱՄՆ-ի, թեպետ մի փոքր այլ լույսի ներքո) դեպքերի վրա:[1] Հիմա այս բացթողնման պատճառները քննարկելու ո՛չ ժամանակն է, ո՛չ էլ տեղը. պետք է պարզապես նշել այն փաստը, որ Ռուսական կայսրությունը, դրան հաջորդած Խորհրդային Միությունն ու ժամանակակից Ռուսաստանը գրեթե երբեք չեն եղել գաղութացմանը և հետգաղութացմանը վերաբերող հետազոտությունների առարկա: Իսկապես, եղել են հետգաղութացման ոսպնյակի միջոցով Ռուսաստանի կայսերապաշտական նկրտումների թիրախ դարձած երկրների և ժողովուրդների փորձառությունը վերլուծելու փորձեր, սակայն դրանք հիմնականում սահմանափակվել են ակադեմիական շրջանակներով և մարգինալ քաղաքական խմբերով: Այսօր, Ռուսաստանի կողմից Ուկրաինա լայնածավալ ներխուժման արդյունքում, իրավիճակն սկսում է փոխվել, և ավելի շատ գիտնականներ, քաղաքական գործիչներ, ակտիվիստներ և արվեստագետներ են սկսում խոսել ռուսական գաղութացման և նեոգաղութացման մասին: Այս հետազոտությունը կփորձի այս ոսպնյակները կիրառել Հայաստանի փորձառության առնչությամբ և Հայաստանի դեպքի վրա ցույց տալ, թե ինչպես են ժամանակակից ռուսական գերիշխանության դիսկուրսները գործում հետխորհրդային տարածքում:

Ժան Ժակ Ռուսոն իր հիմնարար՝ «Հասարակական դաշինքի մասին» աշխատության մեջ գրում է. «Ամենաուժեղն անգամ մշտապես իշխելու հա-

1 Էդվարդ Սայիդի, Ֆրանց Ֆանոնի, Հոմի Բհաբհայի, Գայատրի Չակրավորտի Սպիվակի պես հեղինակներ և այլք, որոնց ծագումը կապված է եղել Արևմտյան, նախևառաջ՝ բրիտանական և ֆրանսիական գաղութարար կայսրությունների կողմից գաղութացման ենթարկված երկրների հետ:

մար բավականաչափ հզոր չի լինում, եթե, իհարկե, իր ուժը չի վերածում իրավունքի, իսկ իրեն հնազանդվելը՝ պարտականության» (Rousseau, 2021, էջ 21)։ Ռուսոյի դիտարկումը կարևոր է՝ գերիշխանության զանազան համակարգերը հասկանալու համար, որոնք կիրառվել են դեռ անհիշելի ժամանակներից՝ մի խմբի իշխանությունը մյուսների նկատմամբ ապահովելու համար։ Թեև այս համակարգերը սովորաբար հիմնված են ուժի վրա, որը մի կողմը կիրառում է՝ մյուսին ենթարկեցնելու նպատակով, դրանք նաև հիմնված են որոշակի դիսկուրսի վրա, որն արդարացնում է այս համակարգերը թե՛ ճնշողի, թե՛ ճնշվածի աչքում։ Այս համակարգերից մեկը գաղութացումն է՝ իր տարատեսակ ձևերով. նախորդ դարերին, հատկապես՝ 18-19-րդ դարերին հատուկ «դասական» ձևերը կամ ներկա՝ նեոգաղութային ձևը։ Դժվար թե գերընդհանրացում լինի ասել, որ պատմության ընթացքում եղած գաղութային գերիշխանության որևէ դեպք բացառապես հիմնվել և պահպանվել է զուտ ուժով։ Թեպետ ուժը միշտ կարևոր, կամ, ինչպես շատերը կպնդեն՝ վճռորոշ դեր է խաղում գաղութային գերիշխանության մեջ, որևէ գաղութային գերիշխանություն հնարավոր չէր լինի առանց գաղափարական հենքի, առանց այդ գերիշխանությունն արդարացնող խոսույթների և դիսկուրսների։ Այս դիսկուրսները թե՛ գաղութարարին, թե՛ գաղութացվողին բացատրում են, թե ինչու է գաղութային գերիշխանությունն արդար ու լավ։ Երբ այս խոսույթները խարլխվում են և դադարում են իմաստ ունենալ գաղութարարների կամ գաղութացվածների համար, ոչ մի ուժ բավարար չի լինի գաղութային գերիշխանությունն առնվազն երկարաժամկետ պահպանելու համար։

2022-ին, Ուկրաինա լայնածավալ ներխուժումից ի վեր, ռուսական գաղութացման (և նեոգաղութացման) խնդիրը, եթե ոչ գլոբալ առումով, ապա, առնվազն, հետխորհրդային տարածքում ի վերջո դարձել է քննարկման առարկա։ Այնուամենայնիվ, աշխարհում շատ մարդիկ, և, հատկապես, Գլոբալ Հարավում, Ուկրաինայի հակամարտությունը չեն դիտարկում որպես գաղութացման/նեոգաղութացման պատերազմ։ Ավելին, Ռուսաստանի իշխանությունները փորձում են իրենց գործողությունները ներկայացնել որպես Արևմուտքի դեմ ուղղված հակագաղութային պայքարի մաս։ Ըստ էության, հակագաղութային դիսկուրսը յուրացվել է Ռուսաստանի ներկայիս իշխանությունների կողմից և դարձել է ռուսական քարոզչության և «փափուկ ուժի» արդյունավետ գործիք հատկապես Գլոբալ Հարավում (Sabanadze, 2021, էջ 21)։

Զարմանալիորեն, այս դիկուրսն իր համախոհներն ունի ոչ միայն Գլոբալ հարավի երկրներում, որտեղ Արևմտյան գաղութացման ժառանգության հետ կապված օրինական դժգոհություններ կան, այլև ողջ աշխարհում, նաև՝ արևմտյան երկրներում, և, է՛լ ավելի զարմանալիորեն՝ Արևելյան Եվրոպայում և հետխորհրդային տարածքում, օրինակ՝ երկրներում, որոնք պատմականորեն եղել են ռուսական գաղութատիրության զոհն ու այսօր էլ հանդիսանում են Ռուսաստանի նեոկայսերապաշտական նկրտումների օբյեկտը: Այս իրավիճակը ծայրահեղորեն հիասթափեցնող է այն ժողովուրդների ու երկրների համար, որոնք ենթարկվել են ռուսական գաղութացմանը և/կամ նեոգաղութացմանը հետխորհրդային տարածքում կամ Ռուսաստանի ոչ ռուսական ծայրամասում:

Հայաստանն այն երկրներից մեկն է, որն անցյալում ենթարկվել է ռուսական գաղութացման և այսօր էլ շարունակում է դրա թիրախը լինել: Այսօր Հայաստանը պայքարում է, որ հաղթահարի Ռուսաստանից կախվածությունը, և, այս համատեքստում, Հայաստանը ենթարկվում է հիբրիդային հարձակումների, ներառյալ՝ ապատեղեկատվական արշավները, որոնց նպատակն է խեղդել Հայաստանի՝ ժողովրդավարության և ինքնիշխանության ձգտումը և պահպանել Կրեմլի ազդեցությունը երկրում: Մեր հետազոտության մեջ կնույնականացնենք Կրեմլի գերիշխանության գործիքները, ներառյալ՝ մշակութային խոսույթներն ու քարոզչական սխեմաները:

Կարևոր է հստակեցնել «գաղութացում» և «նեոգաղութացում» եզրույթների նշանակությունը, ինչպես որ դրանք կիրառվել են այս ուսումնասիրության մեջ: Մեր տեսակետն այն է, որ գաղութացումն ուժի (կամ ուժի կիրառման սպառնալիքի) ու հարկադրանքի ուղղակի կիրառման վրա հիմնված քաղաքականություն է, որի նպատակը երկրի հանդեպ մասնակի կամ ամբողջական վերահսկողություն սահմանելն է: Նեոգաղութացումն այլ երկրում ազդեցություն ունենալու կամ պահպանելու քաղաքականությունն է՝ ավելի շուտ կիրառելով մշակութային, քաղաքական, տնտեսական կամ այլ միջոցներ, քան ուղղակի ուժ:

3. Ռուսաստանի ազդեցությունը հետխորհրդային Հայաստանում. ակնարկ

Հետխորհրդային ժամանակաշրջանում ռուս-հայկական հարաբերություններն ունեն հետգաղութային կամ նեոգաղութային կախվածության բնորոշ գծեր: Մասնավորապես, դրանք են Հայաստանի անդամակցությունը Ռուսաստանի ղեկավարած քաղաքական, տնտեսական և ռազմական դաշինքներին, Ռուսաստանի քաղաքական, տնտեսական, լրատվական, լեզվաբանական և մշակութային անհամաչափ ազդեցությունը Հայաստանում, Ռուսաստանին պատկանող ռազմավարական ակտիվները, Հայաստանում առկա ռազմակայանների գոյությունը, Հայաստանից Ռուսաստան մեծածավալ աշխատանքային միգրացիան:

Եվ այսպես, Հայաստանը եղել է Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) անդամ 1991-ի՝ դրա կազմավորումից ի վեր, Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) անդամ 2002-ի՝ դրա կազմավորումից ի վեր (իսկ նախկինում՝ Հավաքական անվտանգության պայմանագիր), և Եվրասիական տնտեսական միության (ԵՏՄ) անդամ՝ 2015-ից սկսած (թեև Հայաստանը մտադրություն էր հայտնել դրան ավելի վաղ միանալ՝ 2013-ին): 2024-ին Հայաստանը հայտարարեց, որ «սառեցնում է» իր անդամակցությունը ՀԱՊԿ-ին, բայց դեռևս շարունակում է մնալ մյուս երկու կազմակերպությունների անդամ: Ուշագրավ է, որ ՀԱՊԿ-ն անդամակցությունը «սառեցնելու» տարբերակ չունի, սակայն Հայաստանի կառավարությունը դժվարությամբ է դուրս գալիս այդտեղից՝ վախենալով ռուսական կողմի հարուցած հնարավոր հետևանքներից: Այնուամենայնիվ, Հայաստանում Ռուսաստանի ռազմական ազդեցությունն անմիջականորեն կապ չունի Հայաստանի՝ ՀԱՊԿ-ին անդամակցելու հետ: Այն հիմնված է երկկողմանի համաձայնագրերի վրա, որոնց մեծ մասը կնքվել է 1990-ականներին. դրանք Հայաստանին դարձնում են Ռուսաստանի «դաշնակից», Ռուսաստանին իրավունք են տալիս ռազմակայաններ ունենալ Հայաստանում, և Հայաստանի՝ Իրանի և Թուրքիայի հետ սահմանների պաշտպանությունը հանձնարարել ռուս սահմանապահներին[2]:

2 ՀՀ վարչապետի և ՌԴ նախագահի միջև ձեռքբերված պայմանավորվածության համաձայն 2025 հունվարի 1-ից ՌԴ սահմանապահները կհեռանան Հայաստան-Իրան սահմանի հսկիչ կետից:

Հայաստանում Ռուսաստանի տնտեսական ազդեցությունը ողջ հետխորհրդային շրջանում վիթխարի է եղել: Հետխորհրդային ժամանակաշրջանի մեծ մասում Ռուսաստանը Հայաստանի ամենախոշոր առևտրային գործընկերն է եղել: Նույնիսկ 2012-ից առաջ, երբ Հայաստանն սկսեց ԵԱՏՄ մտնելու գործընթացը, Ռուսաստանը Հայաստանի ամենախոշոր առևտրային գործընկերն ու ներդրողն էր. Ռուսաստանի հետ առևտուրը կազմում էր 1,2 միլիարդ դոլար, մինչդեռ Ռուսաստանի ներդրումները հասնում էին 3 միլիարդի (Gotey, 2013): Աշխատանքային միգրացիայի առումով, Ռուսաստանը եղել է հայ տնտեսական միգրանտների միակ ամենամեծ ուղղությունը և Հայաստանին ամենամեծ դրամական փոխանցումներ անողը: Վաղ 2010-ականներին, Արժույթի միջազգային հիմնադրամի համաձայն, դրամական փոխանցումների առյուծի բաժինը, որը որոշ տարիների կազմել է 89%, Ռուսաստանից էր (Ghazaryan and Tolosa, 2013):[3]

Ռուսաստանը նաև գերիշխող դիրք ունի Հայաստանի տնտեսությունում՝ Ռուսաստանին պատկանող ակտիվների և ընկերությունների միջոցով: Սրանք ներառում են Հայաստանի էլեկտրական ցանցերը, որը նախ պատկանում էր «ՌԱՕ ԵԷՍ»-ին, իսկ 2015-ից սկսած՝ վերահսկվում է հայկական ծագումով ռուս գործարար Սամվել Կարապետյանի կողմից:[4] Մեկ այլ ռազմավարական ակտիվ՝ Հայաստանի երկաթուղային ենթակառուցվածքը, պատկանում է «Ռուսական երկաթուղիներ»-ի ստորաբաժանում հանդիսացող Հարավկովկասյան երկաթուղուն, որը 2008-ին կոնցեսիոն պայմանագրով ձեռք բերեց Հայաստանի երկաթուղին 30 տարով շահագործելու իրավունքը: Գազի ներմուծումն ու բաշխումը վերահսկում է Գազպրոմ Հայաստանը՝ ռուսական Գազպրոմի ստորաբաժանումը, որը մենաշնորհ ունի գազի շուկայում: Երեք ռուսական ընկերություններ՝ Բիլայն, MTS և Ռոստելեկոմ, գերիշխում էին հաղորդակցության ոլորտում մինչև 2020-ականները, մինչդեռ այս ոլորտի միակ արևմտյան ընկերությունը՝ ֆրանսիական Օրանժը, հայկական շուկայից հեռացավ վաղ

3 Հաշվարկը հիմնված է բանկային համակարգի միջոցով ոչ-առևտրային մաքուր եկամտի 5-ամյա միջինի վրա:

4 Ռուսական պետական ընկերությունը՝ «Ինտեր ՌԱՕ ԵԷՍ»-ը, որին պատկանում էին Հայաստանի էլեկտրական ցանցերը, իր ակտիվները վաճառեց հայկական ծագումով գործարար Կարապետյանին՝ 2015-ին Երևանում տեղի ունեցած զանգվածային ցույցերից հետո, որոնք հայտնի են « Էլեկտրիկ Երևան» կամ «Էլեկտրամայդան» անվանումով: Տես՝ Avedissian (2015), նաև Hetq.am (2015):

2016-ին (Telegeography, 2015)։ Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ 2018-ի հեղափոխությունից հետո իրավիճակն այս ոլորտում փոխվեց, և այսօր Հայաստանի հիմնական հեռահաղորդակցական ընկերությունները տեղական են։ Ի վերջո, խորհրդային շրջանում ռուսական հեռուստաալիքները հեռարձակվում էին հայկական ազգային ալիքների հետ մեկտեղ՝ ապահովելով, որ հայ հասարակությունը նույնիսկ ԽՍՀՄ փլուզումից հետո ենթարկվի ռուսական լրատվական և մշակութային ազդեցության։

Ռուսաստանի ազդեցության այս համառոտ ակնարկը ցույց է տալիս, որ շատ գործոններ, որոնք սովորաբար համարվում են նեոգաղութային կախվածության մաս, առկա են ռուս-հայկական հարաբերություններում։ Դժվար չէ պատկերացնել, թե ինչպիսի հակագաղութային քննադատություններ կկիրառեին Russia Today-ը կամ այլ ռուս քարոզիչներ, եթե նմանատիպ հարաբերություններ գոյություն ունենային որևէ արևմտյան պետության և դրա նախկին գաղութներից մեկի միջև։ Այնուամենայնիվ, երբ խոսքը Հայաստանի մասին է, ռուսական պետական վերահսկողության տակ գտնվող լրատվամիջոցներն ու քաղաքական գործիչները շատ բնական են համարում նմանատիպ կախվածությունը։ Ըստ էության, նրանք պատրաստակամորեն գովերգում էին այն հարաբերությունները, որոնք ի հայտ եկան Հայաստանի և Ռուսաստանի միջև հետխորհրդային շրջանում՝ կիրառելով այնպիսի եզրույթներ, որոնցով նույնիսկ ուշ 19-րդ դարի եվրոպական ամենաեռանդուն գաղութարարները կհպարտանային։ Այսպիսով, ամենամեծ հասարակական հնչեղություն ստացած դեպքերից մեկում պետդումայի խոսնակ Բորիս Գրիզլովը, 2004-ին Հայաստան կատարած այցի ընթացքում նշեց, որ Հայաստանը Ռուսաստանի ֆորպոստն է Հարավային Կովկասում (Регнум, 2004)։ Գրիզլովի հայտարարությունը հանրային դժգոհություն առաջացրեց Հայաստանում, քանի որ այն բացեիբաց կասկածի տակ էր դնում Հայաստանի՝ որպես անկախ պետության կարգավիճակը։ Դրանից հետո, ռուս պաշտոնյաներն ավելի զգուշավոր էին իրենց արտահայտություններում առնվազն մինչև 2018-ի Հայաստանի հեղափոխությունը, երբ հայ-ռուսական հարաբերությունների բնույթն սկսեց փոխվել։

2018-ից առաջ Հայաստանի վերաբերյալ Կրեմլի հռետորաբանությունը հիմնականում դրական էր (առնվազն՝ այսօրվա համեմատ), թեպետ՝ որոշ կարևոր բացառություններով. օրինակ, պաշտոնյաների և քարոզիչների քննադատական հայտարարությունները 2016-ին հայ «ազգային հերոս»

Գարեգին Նժդեհի հուշարձանի բացման առնչությամբ:[5] Այն փաստը, որ Կրեմլի հռետորաբանությունը Երևանի առնչությամբ հիմնականում դրական կամ չեզոք էր 2018-ի հեղափոխությունից առաջ, միանգամայն հասկանալի է, քանի որ Հայաստանը մեծ քայլեր չէր ձեռնարկում, որոնք կարող էին Կրեմլի քննադատության առարկա դառնալ: Կամ, այն հազվադեպ դեպքերում, երբ նման քայլեր ձեռնարկվել են, որպես կանոն՝ դրանցից հրաժարվել են՝ Մոսկվայի ոչ պաշտոնական ճնշման արդյունքում: Ամենաակնհայտ օրինակներից է հետևյալը. 2013-ից առաջ Հայաստանը բանակցություններ էր վարում ԵՄ-ի հետ՝ ասոցացման համաձայնագրի շուրջ, որը նաև ներառում էր ԽՀԱԱԳ (Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտի) մտնելու դրույթներ: Այնուհանդերձ, ըստ էության՝ մեկ օրում, Մոսկվայի ճնշման ներքո, Հայաստանի ղեկավարությունը հայտնեց Ռուսաստանի, Բելառուսի և Ղազախստանի մաքսային միություն (որը հետագայում դարձավ Եվրասիական տնտեսական միություն) մտնելու որոշման մասին: Ակնհայտորեն, Ռուսաստանի ղեկավարած միությանն անդամակցելն անհնար դարձրեց ԽՀԱԱԳ համաձայնագրի ստորագրումը Եվամիության հետ, որը տարիներ շարունակ մշակել էին հայ և եվրոպացի քաղաքագետներն ու մասնագետները: Այս շրջադարձը նշանակալի վնաս հասցրեց Եվրամիության հետ Հայաստանի հարաբերություններին:

Հայաստանի առնչությամբ Կրեմլի հռետորաբանությունն սկսեց նշանակալի փոփոխությունների ենթարկվել 2018-ի Թավշյա ժողովրդավարական հեղափոխությունից հետո: Թեպետ Պուտինն ու այլ պաշտոնյաներ շարունակում էին հիմնականում դրականորեն խոսել Հայաստանի մասին, Հայաստանի առնչությամբ Կրեմլի քարոզիչների հռետորաբանությունը ձեռք բերեց հստակ բացասական նրբերանգներ: Սա տեղի ունեցավ՝ չնայած այն փաստին, որ նոր իշխանությունները չվերանայեցին Հայաստանի արտաքին քաղաքականությունը և չփորձեցին հաղթահարել Հայաստանի կախվածությունը Ռուսաստանից: Սրա ամենահավանական

5 Նժդեհը, որին հաճախ համեմատում են ուկրաինացի ազգայնական առաջնորդ Ստեպան Բանդերայի հետ, 1918-1920-ին Հայաստանի Առաջին Հանրապետության ռազմական առաջնորդներից էր, որը հարավային Հայաստանի մարզ Սյունիքում 1920-1921-ին գլխավորել է դիմադրությունը բոլշևիկների դեմ, որից հետո նա հայոց պատմության խոսույթներում վաստակել է «ազգային հերոսի» կոչում: Հայաստանի Հանրապետական կուսակցությունը, որը 1998-2018 թթ. իշխող կուսակցությունն էր, ընդգծել է Նժդեհի դերը՝ որպես իր հոգևոր հայրի: Այնուամենայնիվ, Նժդեհը նաև հակասական գործիչ է, քանի որ Հայաստանի անկախության անկումից հետո նա հարում էր աջ ծայրահեղական տեսակետների և նույնիսկ մեղադրվել է երկրորդ աշխարհամարտի ընթացքում նացիստների հետ համագործակցության մեջ: Տես՝ օրինակ՝ Kucera (2018):

պատճառն այն էր, որ նոր կառավարությունը վախեցավ, որ նման քայլերը կարող են հանգեցնել լուրջ հետևանքների, մասնավորապես, որ Ռուսաստանը կարող է կանաչ լույս տալ Ադրբեջանին՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը լուծելու համար ուժ կիրառելու հարցում: Այնուամենայնիվ, հենց ինքնին ժողովրդավարական հեղափոխության փաստը, ժողովրդավար բարեփոխումներ իրականացնելու քաղաքականությունը և կոռումպացված հին ռեժիմի մնացորդների, ավտորիտար համակարգի դեմ թեև դանդաղկոտ, բայց փաստացի պայքարը, մտահոգիչ էին Կրեմլի համար:[6]

Շուտով Կրեմլի պաշտոնյաներն սկսեցին բացեիբաց իրենց դժգոհությունն արտահայտել Հայաստանում կատարվող գործընթացների շուրջ: Սրա պատճառն այն էր, որ Հայաստանի հատուկ քննչական ծառայությունը մեղադրանքներ առաջադրեց մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների: Այսպիսով, 2008-ի մարտի 1-ի ցույցերը ցրելու քրեական գործի շրջանակներում, սահմանադրական կարգը տապալելու մեղադրանք առաջադրվեց Հայաստանի Հանրապետության նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանին: Նախկին նախագահը կալանավորվեց երկու ամսով: Պաշտպանության նախկին նախարար Միքայել Հարությունյանին ևս այդ գործով մեղադրանք առաջադրվեց, և նա հայտնվեց հետախուզվողների ցանկում:[7] Ի հավելումն, սահմանադրական կարգը տապալելու մեղադրանքներ առաջադրվեցին ՀԱՊԿ գործող քարտուղար Յուրի Խաչատուրովին, որը 2008-ին ծառայում էր Հայաստանի զինված ուժերում: Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Լավրովն այդ կապակցությամբ հայտարարեց, որ. «Հայաստանի իրադարձությունները հակասում են երկրի նոր իշխանության՝ քաղաքական նախորդ իշխանությանը չհետապնդելու հայտարարություններին» (Риа новости, 2018): Սրանով Մոսկվան մեղադրում էր Հայաստանի ժողովրդավար իշխանությանն ավտորիտար ռեժիմներին հատուկ քաղաքականության՝ քաղաքական նպատակներով մարդկանց հետապնդելու մեջ: Կրեմլը խիստ դժգոհ էր այն փաստից, որ ռուսամետ ռազմաքաղաքական սերուցքը ներկայացնող, Պուտինի ընկերները հանդիսացող և իր շրջապատի մարդիկ պետք է դատական պատասխանատվության ենթարկվեն:

---

6 Հետհեղափոխական կառավարության առաջին քայլերի ու արտաքին քաղաքականության ոլորտում հանդիպած խնդիրների վերաբերյալ, տե՛ս Edwards (2018) և Zolyan (2018):

7 Ուշագրավ է, որ Միքայել Հարությունյանն ուներ նաև Ռուսաստանի քաղաքացիություն և այդ պահին բնակվում էր Ռուսաստանում: Տե՛ս OC Media (2018), News.am (2018):

Կրեմլի քարոզիչների հռետորաբանությունը ևս փոխվեց: Օրինակ, ռուսական պետական վերահսկողության տակ գտնող RT հեռուստաընկերության, ինչպես նաև Россия Сегодня մեդիա գրուպի գլխավոր խմբագիր Մարգարտա Սիմոնյանն ի սկզբանե Հայաստանում իշխանության փոփոխության մասին չեզոք էր արտահայտվում՝ նշելով, որ որևէ նախապայման չի տեսնում, որ «Հայաստանը թեքվի այլ կողմ, և հակառուսական տրամադրությունները գերիշխեն»: Այուամենայնիվ, շուտով, հատկապես Լավրովի հայտարարություններից հետո, նա Հայաստանում կատարվողի և դրա իշխանությունների հանդեպ խիստ քննադատական դիրքորոշում որդեգրեց:

Կրեմլը սկսեց Հայաստանը դիտարկել որպես տարածք, որն աստիճանաբար դուրս էր գալիս իր վերահսկողությունից: Կրեմլի հռետորաբանությունը կամաց-կամաց ձեռք բերեց այսօրվա ձևն ու բովանդակությունը, որի ուսումնասիրությունը մեզ թույլ է տալիս ամբողջությամբ բացահայտել Հայաստանի հանդեպ Կրեմլի քաղաքականության էությունը: Այս հռետորաբանությունը ներառում է գաղութային և նեոգաղութային տարրեր, ինչպես նաև տարրեր, որոնք ներհատուկ են բացառապես ավտորիտար երկրների գաղութային և նեոգաղութային քաղաքականություններին: Այս հռետորաբանության մեջ առկա են թեզեր, որոնք հատուկ են մեկ այլ՝ ձևականորեն ինքնիշխան պետությանը գերիշխելու քաղաքականությանը: Նման բաղադրիչները հատուկ են թե՛ գաղութային, թե՛ նեոգաղութային հռետորաբանությանը: Սա հատկապես հետաքրքիր է այսօրվա համատեքստում, երբ պաշտոնական Մոսկվան իրեն ներկայացնում է որպես նեոգաղութացման դեմ պայքարող միջազգային առաջատար: Ինչպես նշել է Ռուսաստանի նախագահ Պուտինը՝ «Մենք այժմ պայքարում ենք ո՛չ միայն Ռուսաստանի ազատության համար, այլ նաև ողջ աշխարհի»: Այս խոսքերին հղում անելով՝ Ռուսաստանի ԱԳՆ արտաքին քաղաքականության պլանավորման վարչության պետ Ալեքսեյ Դրոբինինը գրում է. «հատուկ ռազմական գործողության հետ մեկտեղ՝ արդարության համար մղվող պայքարում արված մեր երկրի ներդրումը նեոգաղութացման մերկացումն ու տապալումն է» (Дробынин, 2024):

Վերջին տարիներին Հայաստանը որոշ քայլեր է արել՝ ուղղված ռուսական ազդեցության նվազեցմանը: Այնուհանդերձ, վերջին երկու իրադարձությունները ցույց են տալիս, թե որքան զորեղ ուժ է մնում ռուսական գերիշխանությունը, որին առնչվում է Հայաստանը: Առաջին դեպքում, Ռուսաս-

տանի ԱԳՆ-ն միջամտեց Հայաստանի ներքին գործերին՝ պատմության դասագրքի ձևակերպումները փոխելու համար, որոնք չէին համապատասխանում Հայաստանի պատմության՝ ռուսական տարբերակին: 2024-ին, պատմության դպրոցական նոր դասագիրքը Հայաստանը Ռուսական Կայսրությանը միացնելու իրադարձությունները նկարագրում էր որպես «անեքսիա»: Սա հանգեցրեց դիվանագիտական սկանդալի, քանի որ Ռուսաստանի ԱԳՆ-ն պահանջեց փոփոխություններ մտցնել դասագրքի ձևակերպման մեջ: Սա վկայում է, թե որքանով է Ռուսաստանի գերիշխանությունը դեռևս գործոն հանդիսանում Հայաստանի քաղաքականության մեջ, քանի որ Հայաստանի Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն արագորեն զիջեց իր դիրքն ու հայտարարեց, որ դասագրքի ձևակերպումը կփոխվի (Khulian, 2024):

Մյուս դեպքը շատ ավելի լուրջ է. այն վերաբերում է Ռուսաստանի հատուկ ծառայությունների կողմից հովանավորված՝ Հայաստանի ժողովրդավարորեն ընտրված կառավարության դեմ արված ձախողված հեղաշրջման փորձին: 2024-ի սեպտեմբերին ՀՀ քննչական կոմիտեն հայտնեց, որ բացահայտվել է կառավարությունը տապալելու դավադրության փորձ: Ըստ հայ դատախազների՝ Մոսկվան վճարել և վերապատրաստել է խռովարարների հանցախմբի՝ 2024-ին փորձելով տապալել Հայաստանի կառավարությունը, սակայն տեղական անվտանգության ուժերը խափանել են այս ծրագիրը: Դավադրությունը կապված էր Հայաստանի կառավարության քաղաքականության հետ, որն ընկալվում է որպես հակում դեպի Արևմուտք՝ փորձելով նվազեցնել Ռուսաստանի ազդեցությունը (Gavin, 2024):

Ազդեցիկ հայ մտավորականները, որոնք հարցազրույց էին տվել այս հետազոտության համար, նշեցին, որ Հայաստանի առնչությամբ Ռուսաստանի քաղաքականությունն ամբողջովին համապատասխանում է նեոգաղութարարությանը: «Երբ երկիրն, այսպես ասած, ինքնիշխան է, ըստ փաստաթղթերի, մյուս երկիրը, հավանաբար՝ դրա կայսերական նախկին տերը, փորձում է իր ազդեցությունը պրոյեկտել այդտեղ. ո՛չ ուղղակի նվաճման, այլ զանազան ուղիներով՝ տնտեսական կապերով, իր տեսակետները, զարգացման, մշակույթի որոշակի ուղի պարտադրելով և այլն: Իհարկե, ձևական առումով, ավելի թույլ երկիրն անկախ է մնում, բայց մի՞թե դա իսկապես անկախություն է: Սա ամբողջովին նկարագրում է Ռուսաստանի և Հայաստանի հարաբերությունները: Օրինակ՝ գիտական կապերը: Դու փոքր երկիր ես, չես կարող ինքդ քո գիտությունը զարգացնել, բայց

երբ Ռուսաստանը քո հիմնական ուղենիշն է՝ դառնում ես կախյալ» (Յ.Ա., անձնական հաղորդակցություն, հուլիսի 4, 2024):

Հայոց պատմության մեջ Ռուսասատնի դերի՝ հայկական գնահատումը ժամանակի ընթացքում փոխվել է: Հայաստանում Թավշյա հեղափոխությունից առաջ գերիշխում էին Ռուսաստանի դերի դրական գնահատականները: Խորհրդային անցյալի հանդեպ հայ քաղաքական սերուցքի մոտեցումը կարող է բնութագրվել որպես «մնեմոնիկ երկիմաստություն» (Zolyan, 2023): Խորհրդային գերիշխանությունը չէր դիտարկվում որպես օկուպացիա, իսկ Խորհրդային Հայաստանը դիտարկվում էր որպես հայկական պետականության զարգացման փուլ («երկրորդ հանրապետություն» հղմամբ), սակայն խորհրդային քաղաքականության որոշ կողմեր քննադատության էին ենթարկվում (օրինակ՝ վաղ 1920-ականներին Ղարաբաղյան հարցի պրոադրբեջանական մոտեցումը, ստալինյան բռնաճնշումները, և այլն): 2018-ի հեղափոխությունից հետո հայոց պատմության մեջ Ռուսաստանի դերի վերաբերյալ քննադատական մոտեցումներն ավելի լայն տարածում ստացան, թեպետ, օրինակ, քչերն էին Հայաստանի, այսպես կոչված, «խորհրդայնացումը» կոչում օկուպացիա:[8]

Այնուամենայնիվ, գնալով ավելի շատ մարդիկ են այժմ խոսում այն փաստի մասին, որ անգամ ԽՍՀՄ գոյության օրոք Հայաստանի և Ռուսաստանի միջև եղած հարաբերությունները բնութագրվում էին որպես «կրտսեր և ավագ եղբոր» հարաբերություններ, ինչը ենթադրում է, որ դրանք հավասար հարաբերություններ չէին, և Ռուսաստանը գերիշխում էր Հայաստանին: «Օրինակ, դպրոցներում ավելի շատ ԽՍՀՄ, քան հայոց պատմություն էր դասավանդվում, ու այս անվան տակ, դա իրականում Ռուսաստանի պատմությունն էր» (Ա. Թ., անձնական հաղորդակցություն, հուլիսի 2, 2024):

Ըստ որոշ հայ մտավորականների՝ Հայաստանում ռուսաց լեզվի գերակայությունն աղետաբեր ազդեցություն է թողել մեր ինքնության վրա: «Ռուսաց լեզվի պատճառով՝ մենք դարձել ենք պատճենի պատճեն: Ռուսաց լեզվի առկայությունը մեզ զրկել է հնարավորությունից լինել...» (Դ.Ի., անձնական հաղորդակցություն, հուլիսի 1, 2024): Ըստ մեր զրուցակիցներից մեկի, որն ուսումնասիրել է հայաստանյան համատեքստում գաղութատիրության խնդիրը, Հայաստանը գաղութացվել է Ռուսաստանի կողմից, բայց մենք

8 Տես՝ Վարդանյան (2018):

ամբողջությամբ չենք գիտակցել այս փաստը և չենք սովորել խոսել գաղութարարի հետ. «Հայաստանը դարձրել են էկզոտիկ և արևելյան, որը գաղութացման հիմնական նշաններից է: Հայերը չեն ընտրել այս ուղին» (Դ.Ի., անձնական հաղորդակցություն, հուլիսի 1, 2024): Որոշ հայ մտավորականներ կարծում են, որ Հայաստանի առնչությամբ Ռուսաստանի քաղաքականությունը ներառում է թե՛ նեոգաղութային, թե՛ մաքուր գաղութային տարրեր: Ինչպես նշեց մեր զրուցակիցներից մեկը՝ «Ռուսաստանը խոսում է իր «ազդեցության ոլորտի» մասին. սա դասական գաղութատիրություն է» (Դ.Ի, անձնական հաղորդակցություն, հուլիսի 1, 2024): Ոմանք այն կարծիքին են, որ Ռուսաստանի քաղաքականությունը բացառապես գաղութային է. «Ռուսաստանն ագրեսիվ պետություն է, որը չի սիրում փափուկ ուժ, նույնիսկ չի սիրում կապիտալիստական շահագործում: Ռուսաստանը կայսրություն է, որ վերցնում է այնքան, որքան կարող է, անգամ, եթե դրա կարիքը չունի» (Ա.Ի., անձնական հաղորդակցություն, հուլիսի 8, 2024):

Հայաստանում, հայ մտավորական շրջանակներում Հայաստանի ինքնիշխանությունը խարխլելուն ուղղված ռուսական քարոզչության դեմ պայքարելու անհրաժեշտության աճող համոզմունք կա, թեև ոմանք դեռևս կարծում են, որ Պուտինը կայուն լարան ունի. «Հայ հասարակության մի մասը Ռուսաստանի Դաշնության ներքին լարանի մաս է. նրանք կա՛մ Ռուսաստանի Դաշնության քաղաքացիներ են, կա՛մ տարվա մի մասն այնտեղ են ապրում: Պուտինն ուզում է համոզել այդ լարանին, որ Խորհրդային Միությունը դեռ կա: Ժամանակն անցնում է՝ Խորհրդային Միությունը վերադառնում է, Ռուսական Կայսրությունը վերադառնում է» (Ա.Ի., անձնական հաղորդակցություն, հուլիսի 8, 2024):

4. Հայաստանի առնչությամբ Կրեմլի հռետորաբանության հիմնական բաղադրիչները

4.1 Ազդեցություն ունենալու և վերահսկելու պատմական իրավունք

Նեոգաղութային հռետորաբանության տարրերից մեկն այն թաքնված կամ հստակ ուղերձն է, որ նախկին կայսերական պետությունը որոշ տարածքների վրա ազդեցություն ունենալու կամ վերահսկելու պատմական իրավունք ունի: Կրեմլի ներկայացուցիչների տեքստերում շատ հաճախ նշվում է, որ հայ և ռուս ժողովուրդների շահերը պատմականորեն համընկել են, այս ժողովուրդները «եղբայրական» են, և, առհասարակ, դրանց «ընդհանուր պատմությանն» է հաճախ հղում արվում: Այս թեզերը ներկայացվել են այն գաղափարի առնչությամբ, որ Ռուսաստանը, ի տարբերություն այլ պետությունների, Հայաստանին օգուտ է բերել և դեռ շարունակում է: Ավելին, առանց Ռուսաստանի Հայաստանը չէր կարող գոյություն ունենալ: Այն թեզը, որ Ռուսաստանն է ստեղծել Հայաստանը, ինչի համար Հայաստանը պիտի երախտապարտ լինի, նույնպես հաճախ առաջ է քաշվում: Վերլուծենք մի շարք այդպիսի տեքստեր, որոնք հնչել են 2018-ի թավշյա հեղափոխությունից ի վեր և ցույց են տալիս, որ պարունակում են (առնվազն) Հայաստանի վրա ազդեցություն գործադրելու պատմական իրավունքի ուղերձ:

2024-ի հունվարին Հայաստանում Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Կոպիրկինը Ռիա Նովոստի գործակալությանը տված հարցազրույցում հայտարարել է. «Ռուսաստանի և Հայաստանի միջև հարաբերությունները շարունակում են մնալ դաշնակցային: Մեր ռազմավարական շահերը ևս օբյեկտիվորեն համընկնում են հիմնական չափանիշներով, ինչն ապացուցվել է թե՛ հին, թե՛ ժամանակակից պատմությամբ: Մենք շատ պատմական կապեր ունենք: Կարիք չկա ասելու, թե դարավոր պատմության ընթացքում ինչն է կապել մեր ժողովուրդներին: Հետևաբար, կարծում եմ, որ միանգամայն ճիշտ է, որ ռուսական կողմը հստակորեն նշում է, որ մեր հարաբերությունները, չնայած բոլոր դժվարություններին, որոշ թյուրըմբռնումներին և հանուն իրենց օպորտունիստական, աշխարհաքաղաքական շահերի՝ մեր հարաբերությունների մեջ ճաքեր ստեղծելու [sic.]՝ արտաքին դերակատարների փորձերին, դրանք [հարաբերությունները] պահպանում են և պետք է պահպանեն դաշնակցային, ռազմավարական բնույթ: Նկատի ունեմ, որ դա Ռուսաստանի կամքը չէ, որ նրանք փորձում են այստեղ ներմուծել աշխարհում եղած աշխար-

հաքաղաքական հակամարտությունը: Կրկնում եմ՝ սա ո՛չ Ռուսաստանի ցանկությունն է, ո՛չ նախաձեռնությունը և ո՛չ էլ կամքը: Բայց սա իրողություն է, և, արդյունքում, տեսնում ենք մարդկանց մտքի վրա ազդեցություն ունենալու նպատակով բավական առաջադեմ տեխնոլոգիաների կիրառմամբ՝ համակարգային փորձեր, որոնց նպատակն է հենց հիմա լուծել օպորտունիստական, աշխարհաքաղաքական խնդիրներ, որոնք բացարձակապես ոչ մի ընդհանուր բան չունեն ո՛չ Հայաստանի և Ռուսաստանի ժողովուրդների, ո՛չ տարածաշրջանի երկրների և ժողովուրդների շահերի, և, ի վերջո, ո՛չ էլ ամբողջ աշխարհում խաղաղության և կայունության հետ» (Риа новости, 2024):

Դեսպանը պնդում է, որ պատմականորեն և օբյեկտիվորեն Հայաստանի և Ռուսաստանի ռազմավարական շահերը համընկնում են: Դեսպանի խոսքերը ենթադրում են, որ նա գիտի, թե ինչն է բխում հայ ժողովրդի շահերից, և ինչը՝ ոչ, և, եթե պարզվի, որ ժողովուրդն այլ դիրքորոշում ունի սեփական շահերի վերաբերյալ, ուրեմն, նշանակում է, որ որոշ օտար, մութ ուժեր, որոշ տեխնոլոգիաների օգնությամբ (հստակ չէ, թե ինչպիսի), կաշառել են մարդկանց՝ զրկելով նրանց իրենց շահերն ազատորեն սահմանելու հնարավորությունից: Ի հավելումն, այս հատվածը ենթադրում է, որ Ռուսաստանը, ի տարբերություն այլ արտաքին դերակատարների, որոշակի բացառիկ դիրք ունի Հայաստանում: Դեսպանի մտածելակերպից ելնելով՝ Ռուսաստանը պարզապես այն օտար պետություններից մեկը չէ, որը կարող է որոշակի հարաբերություններ ունենալ Հայաստանի՝ որպես անկախ պետության հետ, այլ բացառիկ գործընկեր է, և այս բացառիկ, առանձնահատուկ հարաբերությունները հիմնված են «թե՛ հին, թե՛ ժամանակակից» պատմության վրա: Միայն առաջին հայացքից է թվում, որ դեսպանը խոսում է երկու երկրների շահերի զուգադիպության, դաշնակցային հարաբերությունների մասին, և ոչ մի ուղղակի պնդում չկա, որ պատմականորեն Ռուսաստանն իրավունքներ ունի Հայաստանի նկատմամբ: Բայց, ըստ էության, ասվածը դասական նեոգաղութային դիսկուրս է այն փաստի մասին, որ երբեմնի կայսրության մասը հանդիսացող տարածքի վրա գտնվող պետությունը չի կարող առնվազն անկախ արտաքին քաղաքականություն ունենալ և պետք է իր շահերը ստորադասի նախկին կայսերական տիրակալի շահերին:

Ահա Հայաստանում Ռուսաստանի դեսպանի մեկ այլ հայտարարություն. «Միաժամանակ, իհարկե, մենք չենք կարող անտարբեր մնալ Հարավային

Կովկասում կատարվողի հանդեպ: Պատմականորեն, Ռուսաստանը կովկասյան պետություններից մեկն է, և, ավելին, տարածաշրջանի և աշխարհի միակ երկիրը, որը դաշնակցային հարաբերություններ է պահպանում թե՛ Ադրբեջանի, թե՛ Հայաստանի հետ: Մենք Հայաստանի և Ադրբեջանի ժողովուրդներին կապված ենք բարեկամության, համագործակցության և փոխօգնության դարավոր կապերով: Սա անգին ակտիվ է: Մենք այն գնահատում ենք: Ելնում ենք այն փաստից, որ Հարավային Կովկասի ճակատագիրը պետք է վճռվի նրանց կողմից, ում ընդհանուր տունն է դա: Դրսից ոչ ոք Անդրկովկասին կայուն խաղաղություն և կայունություն չի բերի: Հույսն արևմտյան «հրաշագործ» օգնության վրա դնելը պատրանքային է ու վտանգավոր: Սերբական Կոսովոյի, Իրաքի, Աֆղանստանի, Լիբիայի, Սիրիայի՝ Մերձավոր Արևելքի կործանված բնակավայրերի (որը, փաստորեն, մոնոպոլիզացվել է ԱՄՆ կողմից) և Ուկրաինայի օրինակները հստակորեն ցույց են տալիս, թե ինչով է հղի հայտնի «ժողովրդավարների» և «հաշտարարների» միջամտությունը: Սխեման պարզ է. սկզբում կգան գեղեցիկ կարգախոսներով, ամեն ինչ կկործանեն, ու հենց իրավիճակը թեժանա՝ կփախչեն՝ իրենց հետևից թողնելով այրված դաշտ: Ու, որպես կանոն, ոչ ոք պատասխանատվություն չի կրում: Վաշինգտոնն այլևս չի թաքցնում այն փաստը, որ Հարավային Կովկասը դիտարկում է որպես բազա՝ Ռուսաստանի դեմ «երկրորդ ճակատ» բացելու համար: Սա հիմնարար կերպով հակասում է տարածաշրջանի ժողովուրդների իրական շահերին» (Риа новости, 2024):

Դեսպանը պնդում է, որ ինչ-որ վատ բան է տեղի ունենում Հարավային Կովկասում. նա ուղղակիորեն չի ասում, թե հատկապես ինչն է վատ, բայց ակնարկում է, որ Արևմուտքը Հայաստանին տրամադրում է Ռուսաստանի դեմ: Դեսպանը որևէ առանձնահատկություն կամ ապացույց չի տրամադրում՝ ի պաշտպանություն իր խոսքերի, սակայն պարզ է, որ Հարավային Կովկասում այլ միջազգային դերակատարների որևէ ներկայություն դիտարկվում է որպես բացասական երևույթ՝ ակնարկելով, որ միայն Ռուսաստանը կարող է տարածաշրջանում քաղաքական դերակատարի օրինական իրավունք ունենալ: Այլ կերպ ասած՝ Ռուսաստանը տարածաշրջանում որոշ քաղաքական գործողություններ իրականացնելու օրինական իրավունք ունի դեսպանի համար ակնհայտ պատճառներով, մինչդեռ միջազգային մյուս խաղացողները, հատկապես՝ Արևմուտքից, չունեն այդ իրավունքը: Եթե ինչ-որ բան են անում՝ «միջամտություն» է, ինչը, անտարակույս, բացասական է: Եվ հակառակը, ըստ դեսպանի՝ ակնհայտ է, որ Ռուսաստանն

օրինական իրավունք ունի մասնակցելու տարածաշրջանում կատարվող գործընթացներին (թեև չի մասնավորեցնում, թե այդ մասնակցությունն ինչի է հանգեցնում): Ի՞նչն է Ռուսաստանին օրինական իրավունք տալիս գործել Հարավային Կովկասում. իրավունք, որը մյուս դերակատարները, հատկապես՝ արևմուտքից, իր կարծիքով, չունեն: Ակներևաբար, Հարավային Կովկասի հանդեպ Ռուսաստանի «անտարբերության» անհնարինության պատճառն այն է, որ՝ «Պատմականորեն, Ռուսաստանը կովկասյան պետություններից մեկն է»: Սակայն «գործընթացները», որոնց մասին խոսում է դեսպանը, Ռուսաստանում չեն կատարվում, և Հարավային Կովկասը Ռուսաստանը չէ: Ի՞նչ կապ ունի պատմությունը: Ավելին, դեսպանն ակնարկում է, որ միայն Ռուսաստանն է հասկանում, թե ինչն է ժողովուրդների շահերից բխում, իսկ ինչը՝ ոչ: Այս տրամաբանությամբ, ստացվում է, որ Ռուսաստանը կարող է միջամտել հարավկովկասյան պետությունների ներքին գործերին՝ նրանց ճիշտ՝ Ռուսաստանի համարած ճիշտ ուղու վրա դնելու նպատակով:

Կրեմլի քարոզիչներից մեկի՝ Russia Today պետական մեդիա հոլդինգի տնօրեն Մարգարիտա Սիմոնյանի կողմից արված հայտարարություններ-ի (2023 թ. արված) հետևյալ օրինակները պարունակում են Հայաստանի նկատմամբ Ռուսաստանի պատմական իրավունքի ավելի ուղիղ արված ուղերձներ, և որ միայն Ռուսաստանի շնորհիվ է, որ Հայաստանը գոյություն ունի. «Կասկած չկա, որ շուտով կխնդրեն, որ ռուսական ռազմաբազան հեռանա: Ո՞մ հոգն է, որ մեր ռազմաբազան միակ բանն է, որ երաշխավորում է ոչ միայն անվտանգությունը, այլև այն պետություններով շրջապատված Հայաստանի գոյությունն իսկ, որոնք դարեր շարունակ փորձել են կուլ տալ դրան»:... «Բացի Ռուսաստանից՝ Հայաստանին ոչ ոք երբևէ չի օգնել: Ու երբևէ չի էլ օգնի: Սա չիմանալ՝ նշանակում է չուզենալ իմանալ: Չուզենալ իմանալը կամովին հիմարություն է: Իսկ կամովին հիմարությունը, որպես կանոն, դաժանորեն պատժվում է պատմության կողմից» (Simonyan, 2023): «Ուրեմն ինչո՞ւ չեք ուզում մեզ հետ ապրել: Մի՞թե վատ է եղել: Շատերիդ համար ձեր պետականությունը, մշակույթը՝ որպես այդպիսին, մեր շնորհիվ է առաջացել: Ո՞վ է ձեզ ճնշել: Ո՞վ է ձեզ դիպել»... (Simonyan, 2023) «Հուսամ՝ հայերը չեն հետևի ուկրաինացիների օրինակին, որոնք կործանում են Օդեսան հիմնած Եկատերինա II-ի հուշարձանները: Եվ նրանք կհիշեն, թե ինչ է Հայաստանը դարձել՝ Ռուսաստանի մասը լինելու շնորհիվ, ու ինչ դարձած կլիներ, կամ, ավելի շուտ՝ դարձած չէր լինի, եթե դա պատահած չլիներ: Թե՛ ֆիզիկապես, թե՛ մշակութային առումով»

(Simonyan, 2022): ... «Ցանկացած հայ, որը համարձակվում է քննադատել Ռուսաստանին՝ պետք է գնա ու կտրի իր կեղտոտ լեզուն»... «Ըստ էության, ձեր արածներից հետո, Ռուսաստանը լիովին բարոյական իրավունք ունի թքել ձեզ վրա ու ճզմել ձեզ: Բայց այդպես չի վարվի: Վստահ եմ: Այս անգամ էլ կօգնի: Ռուսաստանն այդպիսին է. մեծահոգի և վեհանձն, իմ սիրելի հայրենիքը» (Simonyan, 2020):

Ըստ այս խոսույթի՝ Ռուսաստանը եղել է Հայաստանի փրկիչը, մինչդեռ հարևանները միշտ ցանկացել են Հայաստանի կործանումը: Ինչպես միշտ, քարոզչությունն ամբողջապես հորինվածքի վրա չէ հիմնված, այլ ներառում է փաստեր, որոնք հետագայում մանիպուլացվում են՝ քարոզչին հարմար խոսույթ ստեղծելու նպատակով: Ռուսաստանի հետ հարաբերությունների՝ Հայաստանի պատմությունը բավականին խառն է և ներառել է ժամանակաշրջաններ, երբ շատ հայեր ռուսական տիրապետությունը համարել են շահեկան, կամ, առնվազն, չարյաց փոքրագույնը, համեմատած այլ կայսրությունների հետ, որոնք փորձել են իշխել երկիրը: Դժվար է հերքել, որ որոշակի փուլերի ընթացքում Ռուսաստանի ներկայությունը բավականին նպաստավոր էր հայերի համար, հատկապես՝ երբ Ռուսաստանի վերաբերմունքը Հայաստանին համեմատում ենք Օսմանյան կայսրությունում հայ բնակչության վիճակի հետ: Երբ Ռուսաստանն Արևելյան Հայաստանը նվաճեց Իրանից, դա շահեկան էր շատ հայերի համար, որոնք, որպես քրիստոնյա, ավելի մեծ հնարավորություններ ունեին ուղղափառ քրիստոնյա Ռուսական Կայսրությունում, քան մուսուլմանական իրանական կամ Օսմանյան կայսրություններում: Այս հույզերը ներկայացրել է հայ գրող Խաչատուր Աբովյանը, ով նկարագրել է պարսկական և թուրքական իշխանության օրոք հայերի թշվառությունը՝ մինչ ռուսական նվաճումը:[9] Հայերի համար Ռուսաստանի ընկալումը որպես նպաստավոր ուժ, կամ, առնվազն, չարյաց փոքրագույն, շատ ավելի արմատացավ 19-րդ դարի վերջին հայերի լայնածավալ կոտորածից և 1915-ին Օսմանյան Թուրքիայում հայերի ցեղասպանությունից հետո: Նաև, խորհրդային ժամանակաշրջանը ՀԽՍՀ-ում դրական ժողովրդագրական և սոցիալական փոփոխությունների փուլ էր, որը համակցվեց հայ ազգային ինքնության և ազգային մշակույթի զարգացման հետ:

9 Խաչատուր Աբովյանի և նրա գաղափարների վերաբերյալ՝ տես՝ Panossian (2006, էջ. 143-144):

Այնուամենայնիվ, սա պատկերի մի մասն է: Ռուսական կայսրության և դրա խորհրդային իրավահաջորդների հետ Հայաստանի հարաբերությունների պատմությունը լի է ճնշումների և հալածանքների դրվագներով: Դրանք ներառում են 19-րդ դարի վերջի և 20-րդ դարասկզբի հայ մտավորականների հալածանքները, նույն ժամանակահատվածում հայ եկեղեցու սեփականությունը հափշտակելու և հայկական դպրոցները փակելու փորձերը, զանգվածային սպանություններն ու ձերբակալությունները բռնի «խորհրդայնացման» ժամանակ, բռնի կոլեկտիվացումը, ստալինիզմի օրոք զանգվածային բռնաճնշումները և արտաքսումները, որոնք զարհուրելի դրվագներից ընդամենը մի քանիսն են: Այս դրվագներից բացի, Հայաստանի ներառումը Ռուսական կայսրության, իսկ հետագայում՝ Խորհրդային Միության մեջ, ոչ թե «կամավոր միացում» էր, այլ կայսերական նվաճում, թեև այդ ժամանակ գուցե որոշ հայեր այն համարեին նպաստավոր:[10] Անցյալի այս տարբերակն այնքան կարևոր է Ռուսաստանի իշխանության համար, որ, ինչպես վերը նշվեց, Ռուսաստանը 2024-ին նույնիսկ միջամտել է Հայաստանի ներքին գործերին՝ դա պաշտպանելու նպատակով (Khulian, 2024):

Հատկանշական է նաև վերը բերված հայտարարությունների ոճն ու համատեքստը: Տեքստերի ծայրահեղ հուզականությունն ու բարոյախրատական բնույթն անմիջապես աչքի են զարնում: Դրանց հեղինակը՝ Մարգարիտա Սիմոնյանը, RT ղեկավարը և Կրեմլի ամենակարկառուն քարոզիչը, իր բացառիկ դժգոհությունն է հայտնում Հայաստանի ղեկավարության վարած քաղաքականության նկատմամբ, որն, իր կարծիքով, արևմտամետ և հստակորեն հակառուսական է դարձել: Քարոզիչն Արևմուտքի հետ հարաբերություններն ամրապնդելու՝ Հայաստանի կառավարության գործողությունները համարում է դավաճանություն: Նրա հայտարարությունների զգացմունքայնությունը կարող է թելադրված լինել նաև այն փաստով, որ Երևանը բազմիցս քննադատել է Հայաստանի հանդեպ Ռուսաստանի գործողությունները, որն, ըստ Սիմոնյանի, իր գոյության համար բացառապես Ռուսաստանին է պարտական: Ի հավելումն վերոնշյալ տեքստերի զգայականությանն ու բարոյախրատական բնույթին՝ անհնար է չնկատել սպառնալիքների լեզուն («Հուսամ՝ հայերը չեն հետևի ուկրաինացիների օրինակին», «դաժանորեն պատժվում են պատմության կողմից») և վիրավորանքները («կամովին հիմարություն», «կեղտոտ լեզու», «թքել

10 Ռուսական կայսրության և Խորհրդային Միության կազմում Հայաստանի բարդ փորձառության մասին՝ տե՛ս՝ Panossian (2006), Suny (1993) and Zolyan (2023).

ձեզ վրա և ճզմել»): Մեկ այլ ուշագրավ մանրամասն է նաև այն, որ տիկին Սիմոնյանը ծագումով հայ է, թեև ծնվել է ո՛չ հենց Հայաստանում, այլ Հյուսիսային Կովկասում, բնիկ հայերի ընտանիքում, և որի նախնիները եկել են այդ տարածք որպես փախստականներ՝ 1915-ի ցեղասպանության արդյունքում: Տիկին Սիմոնյանն ինքը հաճախ հղում է անում իր ծագմանը՝ հայկական խնդիրների մասին խոսելը հիմնավորելու նպատակով:

Իհարկե, տիկին Սիմոնյանը Կրեմլի միակ խոսափողը չէ, որը նույն ոճով նման գաղափարներ է արտահայտում: Ընդհանուր առմամբ, Ռուսաստանի շնորհիվ Հայաստանի պետականություն ունենալու թեզը կարելի է գտնել Կրեմլի շատ այլ խոսափողների հայտարարություններում:[11] Հաճախ հանդիպում են պնդումներ, որ Ռուսաստանը միշտ օգնել է Հայաստանին, և հայերն ու ռուսները եղբայրական ժողովուրդներ են: Օրինակ, Ռուսաստանի ԱԳՆ խոսնակը հայտարարել է. «Պատմության ընթացքում մենք բազմիցս ձեռք ենք մեկնել եղբայրական հայ ժողովրդին և մտադիր ենք ապագայում էլ այդպես վարվել» (Tass.ru, 2024):

4.2 Ռուսաստանը՝ որպես «խաղաղարար»

Կայսերապաշտության և գաղութատիրության դիսկուրսների առանձնահատկություններից մեկն այն պնդումն է, որ կայսրությունը խաղաղություն է ապահովում իր գաղութների ժողովուրդներին: Խաղաղության ապահովումը հաճախ գաղութային իշխանության հիմնական արդարացումներից է: Հայաստանում ռուսական գաղութացման (և նեոգաղութացման) դիսկուրսը ևս բացառություն չէ: Այն պնդումը, որ Հայաստանում Ռուսաստանի ներկայությունը խաղաղություն և անվտանգություն է ապահովում Հայաստանին և տարածաշրջանին, ռուսական պաշտոնական և կիսապաշտոնական հռետորաբանության հիմնական տարրերից մեկն է: Ռուսաստանն իրեն դիրքավորում է որպես խաղաղապահ և Հայաստանում իր ռազմական ներկայությունն արդարացնում է այն պնդմամբ, որ Ռուսաստանի շնորհիվ Հայաստանն ունի անվտանգություն և կայունություն: Եկեք քննենք պաշտոնյաների և քարոզիչների հայտարարություններից նման օրինակներ:

«2020-ի աշնանը Ռուսաստանի Դաշնության և անձամբ նախագահ Պուտինի ջանքերը կանխեցին Հայաստանի լիակատար պարտությունը»

11 Տե՛ս, օրինակ՝ 1tv.ru (2024):

(Министерство иностранных дел Российской Федерации, 2023): ... «Այսօր մեր ռազմական ուժերն այս տարածաշրջանում խաղաղության ապահովման հիմնական բաղադրիչն են» (Министерство иностранных дел Российской Федерации, 2024): ...«Ռուս զինվորներն ու սպաները շարունակում են արդյունավետորեն խաղաղություն և անվտանգություն ապահովել ոչ միայն Հայաստանում [...], այլ նաև ողջ Հարավային Կովկասում: Հանրապետությունում մեր ռազմական ներկայությանն առնչվող ցանկացած քննարկում համարում ենք վնասաբեր և անպատեհ» (Министерство иностранных дел Российской Федерации, 2023): ...«Մենք համոզված ենք, որ, ի տարբերություն Եվրամիության առաքելությունների պսևդո-դիտորդների, որոնք զբաղվում են իրենց սահմանված նպատակներից շատ հեռու գտնվող խնդիրներով, ՀԱՊԿ-ն ունակ է կայունացնող դեր խաղալ Հարավային Կովկասում» (Министерство иностранных дел Российской Федерации, 2024): ... «Հայկական ղեկավարությունը պետք է փոխի իր արևմտամետ կուրսը [...] և գիտակցի, որ Հայաստանի միակ իրական պաշտպանը կարող է լինել Ռուսաստանը, և ոչ՝ Եվրամիությունը և ՆԱՏՕ-ն» (Бойков и Леонова, 2024):

Ապշեցուցիչ է, որ գրեթե բոլոր վերոնշյալ օրինակներն այն թեզն են պարունակում, որ Ռուսաստանին՝ որպես Հայաստանում խաղաղություն և անվտանգություն ապահովող ուժի, այլընտրանք չկա: Հարկ է նշել, որ այս հայտարարությունների մեծ մասն արվել է ի պատասխան Երևանի որոշ գործողությունների և հայտարարությունների՝ արևմտյան կառույցների և երկրների հետ հարաբերություններն ամրապնդելու և խորացնելու վերաբերյալ, ինչպես նաև ի պատասխան Երևանի՝ հակահայկական գործողությունների առնչությամբ Մոսկվային ուղղված կոշտ քննադատության: Կրեմլի խոսնակների տեքստերը Երևանի վարած քաղաքականության վերաբերյալ դժգոհություն են արտահայտում: Կրեմլի խոսնակների հայտարարությունների ոճը բացահայտորեն դիդակտիկ է, հաճախ՝ վրդովված, և, որոշ չափով՝ սպառնալից: Հարկ է նաև նշել, որ որպես խաղաղարար դիրքավորվելը տեղի է ունենում ի պատասխան Հայաստանի և Ադրբեջանի միջև երկարատև հակամարտության: Ի դեպ, պաշտոնապես լինելով Հայաստանի դաշնակիցը՝ Ռուսաստանն Ադրբեջանին զենք է մատակարարել և մատակարարում և վերջին տարիներին երբեք չի քննադատել Ադրբեջանի գործողությունները, նույնիսկ՝ երբ վերջինս Հայաստանի տարածքում ռազմական գործողությունների է դիմել: Պետք է նաև նշել, որ Ռուսաստանը միաժամանակ ակնարկում է, որ արևմտամետ կուրսի

փոփոխության պարագայում Հայաստանն իբր կարող է հովանավորչություն ակնկալել: Բնականաբար, նման մոտեցումը հակասում է հռչակված «խաղաղապահ քաղաքականությանը»:[12]

4.3 Տնտեսական կախվածություն

Երկրների նկատմամբ գերիշխելու քաղաքականության մեջ տնտեսական լծակները վիթխարի դեր են խաղում: Տնտեսական կախվածությունն արդյունավետ գործիք է՝ քաղաքական ճնշում գործադրելու համար: Մատակարարված ռեսուրսների գները բարձրացնելու սպառնալիքները, կարևոր որևէ բանի մատակարարումը դադարեցնելը կամ շահութաբեր պայմանագրերը վերանայելը և այլն կարող են միշտ կիրառվել երկրների նկատմամբ գերիշխելու քաղաքականությունում: Միաժամանակ, դիսկուրսի մակարդակում, գերիշխող երկիրը պնդում է, որ բարգավաճում և զարգացում է բերում իր իշխած երկրին կամ տարածաշրջանին: Այս պնդումը շատ դեպքերում գաղութացման և նեոգաղութացման բնութագրիչ տարրերից մեկն է, և Ռուսաստանի տիրապետության դեպքը Հայաստանում բացառություն չի կազմում:

Կրեմլի խոսափողներն ուշադրություն են հրավիրել այն փաստին, որ Հայաստանի տնտեսությունը սերտորեն կապված է Ռուսաստանի տնտեսությանը, և Հայաստանի տնտեսական աճը հիմնականում պայմանավորված է հենց այս գործոնով: Առաջ է քաշվել այն գաղափարը, որ Ռուսաստանի հետ սերտ տնտեսական հարաբերությունների այլընտրանք չկա: Ի թիվս այլ բաների՝ Հայաստանը քննադատության է ենթարկվել Գլոբալ Հարավում Արևմուտքի հետ իր տնտեսական հարաբերությունները խորացնելու համար: Բերենք մի քանի օրինակ.

«...Հայ ամենամեծ սփյուռքը Ռուսաստանի Դաշնությունում է, մեծ գումարներ են փոխանցվում Ռուսաստանից, առևտուրը հիմնականում մեր երկրի հետ է վարվում. այս ամենն այնքան էլ չի համապատասխանում ԵՄ ինտեգրմանը» (Хамова, 2024): «...Ժամանակի ընթացքում Հայաստանից ևս կպահանջեն դուրս գալ ԵԱՏՄ-ից, որտեղ հանրապետությունը հիմնական շահառուներից մեկն է...» (Воробьев, 2024): «Գազպրոմ Հա-

12 2020-ի պատերազմին հաջորդած հայ-ռուսական հարաբերությունների, մասնավորապես՝ Ադրբեջանի հետ Հայաստանի առճակատման հարցում Հայաստանին օգնելու՝ Ռուսաստանի դժկամության և այս քաղաքականությանը՝ Հայաստանի արձագանքի մասին՝ տես՝ Zolyan (2023), Antonyan (2024) և de Waal (2024):

յաստանը հազար խորանարդ մետրի դիմաց 177 դոլարով բնական գազ է մատակարարում: Արևմուտքում 2-3 անգամ ավելին են վճարում: Եթե ցանկանում են Հայաստանն իրենց գազով ջեռուցել՝ չգիտեմ, թե դա ինչպես կլինի: Եթե նրանք, ինչպես ամերիկացիներն են ցանկանում, փակեն ատոմակայանն ու այն փոխարինեն իրենց փոքր մոդուլային ռեակտորներով... Հարավկովկասյան երկաթուղին այս տարիների ընթացքում ուղևորափոխադրումների, ենթակառուցվածքային ներդրումների համար արտոնյալ գներ է սահմանել: Զանգեզուրի պղնձամոլիբդենային գործարանը հանրապետության բյուջեի հիմնական ներդրողն է: Հետևաբար, նրանք, ովքեր փորձում են Ռուսաստանի Դաշնության և ԵԱՏՄ կողմից «փոքրիկ Հայաստանի» շահագործման «պատկեր» ստեղծել՝ պետք է դրա մասին մտածեն» (Министерство иностранных дел Российской Федерации, 2024): «...Վերջին տարիներին Հայաստանի տնտեսության արագ աճը՝ 2022-ին 12,6%-ով, և բնակչության բարեկեցության աճը մեծապես Ռուսաստանի հետ սերտ առևտրային և տնտեսական համագործակցության շնորհիվ են...» (Министерство иностранных дел Российской Федерации, 2023):

Հարկ է նշել, որ արտահայտությունները հիմնականում արվել են այն դիսկուրսի ֆոնին կամ շրջանակներում, որ Հայաստանը շարժվում է դեպի Արևմուտք: Այսինքն, Կրեմլի խոսափողներն սպառնում են Հայաստանին, վախեցնում՝ ասելով, որ խնդիրներ կունենա և շատ բան կկորցնի, եթե խորացնի իր հարաբերությունները եվրոպական երկրների հետ: Ահա որոշ բառեր և նախադասություններ վերոնշյալ տեքստերից, որոնք հաստատում են այս թեզը. «Ուզում եմ ձեզ հիշեցնել», «պետք է այս մասին մտածենք», «հուսամ՝ հայերը հասկանում են», «Հայաստանը կկորցնի հնարավորությունը»:

4.4 Հակաարևմտյան հռետորաբանություն և աշխարհաքաղաքական բացառիկություն

Երկրների նկատմամբ գերիշխանություն հաստատելու հռետորաբանության բաղադրիչներից մեկն աշխարհաքաղաքական մրցակիցների քննադատությունն է, այլ կերպ ասած՝ այն երկրների վարկաբեկման քաղաքականությունը, որոնք մրցակից են համարվում ազդեցություն ունենալու հարցում: Իհարկե, Արևմուտքի քննադատությունը միանգամայն սովորական է Գլոբալ Հարավում և հենց ինքնին Արևմուտքում: Այնուհանդերձ, Կրեմլի հռետորաբանության առանձնահատկությունն

այն է, որ հակաարևմտյան դիրքորոշումը համակցվում է, այսպես կոչված, աշխարհաքաղաքական բացառիկության հետ, այսինքն, այն գաղափարի, որ միայն Ռուսաստանն իրավուք ունի ազդեցություն ունենալ տարածաշրջանում և Հայաստանում: Այլ կերպ ասած, Կրեմլի պաշտոնյաները Հայաստանում՝ Ռուսաստանի ազդեցություն ունենալու հետ կապված խնդիր չեն տեսնում, ընդհակառակը, նրանք Ռուսաստանի համար դրական և անհրաժեշտ են համարում հետխորհրդային տարածքում շարունակել ազդեցություն ունենալը: Խնդիր տեսնում են միայն, երբ այլ դերակատարներ, մասնավորապես՝ Արևմուտքը, ակտիվանում են տարածաշրջանում: Ավելին, նմանատիպ մտածելակերպն ամբողջությամբ բացառում է Հայաստանի և/կամ հենց հայ ժողովրդի սուբյեկտայնությունը: Գաղափարախոսական այս շրջանակներում, Հայաստանի պես հետխորհրդային երկրներն իրավունք չունեն ընտրելու, թե որ միջազգային գործընկերների հետ միավորվեն. նրանք կարող են և պետք է միավորվեն Ռուսաստանի հետ, իսկ այլ աշխարհաքաղաքական վեկտոր ընտրելու փորձերն անընդունելի են:

Հայաստանի առնչությամբ Կրեմլի և կրեմլամետ դիսկուրսը ներառել է Արևմուտքի ծայրահեղ զգայական քննադատություն՝ արևմտյան հաստատությունները, արժեքները և որոշակի երկրներ վարկաբեկելու նպատակով: Ռուսաստանը դիրքավորվել է որպես միակ միավոր, որն ունակ է կայունություն ապահովել Հայաստանում: Արևմուտքը ներկայացվել է որպես տարածաշրջանում քաոս սերմանող և Արևմուտքի ու Ռուսաստանի միջև աշխարհաքաղաքական առճակատման մեջ Հայաստանին ներգրավել ցանկացող, տարածաշրջանից Ռուսաստանին դուրս մղելու նպատակով՝ Հայաստանին գործիք դարձնել ցանկացող միավոր: Ահա որոշ օրինակներ.

«Փաշինյանին ասվել է, որ Հայաստանն Անդրկովկասում արևմտյան ազդեցության ֆորպոստի վերածի և բացեիբաց ռուսաֆոբ դիրքորոշում որդեգրի» (Карпович, 2024): ... «Հայաստանի ղեկավարությունը պետք է փոխի արևմտամետ կուրսը [...] Հայաստանի միակ պաշտպանը կարող է միայն Ռուսաստանը լինել, ոչ ԵՄ-ն և ՆԱՏՕ-ն» (Бойков и Леонова, 2024): ... «ԵՄ-ի վրա կենտրոնանալն առանց Թեհրանի, Մոսկվայի և Անկարայի՝ տարածաշրջանը կարող է վերածել ոչ թե աշխարհի խաչմերուկի, այլ աշխարհաքաղաքական մրցակցության հարթակի: Ուստի, եվրոպական հեռանկարների համար պայքարում, Երևանը ռիսկի է դիմում թողնել մի ափը՝ առանց երբևէ մյուս ափին հասնելու» (Маркедонов, 2024): ... «Ունե՞նք

արդյոք մեխանիզմներ Ամերիկային և Եվրոպական Միությանը հստակորեն և հիմնարար կերպով ասելու, որ Ռուսաստանը Վրաստանի և Հայաստանի ներքին գործերում արևմտյան միջամտություն չի հանդուրժի» (1tv.ru, 2024):

Բերված օրինակներից երևում է, որ, մասնավորապես, Կրեմլի խոսնակներն առաջ են քաշել խոսույթներ, որ Հայաստանի կառավարության ղեկավարն Արևմուտքի ձեռքում խամաճիկ է. «Փաշինյանին ասվել է, որ Հայաստանն արևմտյան ազդեցության ֆորպոստի վերածի», իսկ նրան կլքեն. «Հայերն ԱՄՆ-ին պետք չեն»: Կան նաև ուղղակի հրահանգներ, որ Հայաստանը պետք է փոխի իր քաղաքականությունը. «Հայաստանի ղեկավարությունը պետք է փոխի արևմտամետ կուրսը»: Կան նաև Հայաստանի ղեկավարությանն ուղղված նախազգուշացումներ. «Երևանը ռիսկի է դիմում թողնել մի ափը՝ առանց երբևէ մյուս ափին հասնելու»:

4.5 Երախտամոռության մեղադրանքներ

Գաղութային դիսկուրսի մեկ այլ տարր էլ երախտամոռության, գաղութարար իշխանության բերած «շնորհները» (օրինակ՝ խաղաղություն, անվտանգություն, տնտեսական և մշակութային զարգացում և այլն) գնահատելու անկարողության կամ դժկամության մեջ ժողովրդին մեղադրելն է: Կրեմլի գերիշխանության հռետորաբանությունը գործում է այնպիսի խոսույթներով, որ հայերը «մոռացել» կամ «չեն գնահատում» այն օգնությունը և աջակցությունը, որ Ռուսաստանը տրամադրել է Հայաստանին: Կարելի է ենթադրել, որ այս խոսույթները կիրառվում են՝ բարոյական ճնշում գործադրելու և դաշնակցի կողմից «դավաճանության» պնդման համար և որպես Ռուսաստանի «պատասխան» գործողությունների արդարացում: Նմանատիպ խոսույթը Կրեմլի գերիշխանության հռետորաբանության գերակա խոսույթներից մեկն էր: Բերենք օրինակներ.

«Կարող է պարզվել, որ Փաշինյանի և իր թիմի՝ ուկրաինա-մոլդովական ուղուն հետևելու փորձերը, ոչնչացնելով Ռուսաստանի հետ երկխոսության հիմքը, շատ ավելի ծանր հետևանքներ ունենան Հայաստանի համար: Եղբայրական կապերը զոհաբերելով հանուն եվրատլանտյան խրախուսանքի՝ Փաշինյանն ի վերջո կարող է իրեն վստահած համաքաղաքացիներին թողնել այն ուժերի վասալական ենթակայության տակ, որոնք հետապնդում են ոչ թե հայ ժողովրդի շահերը, այլ բացառապես ցանկանում են թույլ և կամազուրկ ռեժիմներն օգտագործել մեր երկրի դեմ հիբրիդային

պատերազմի շրջանակներում» (Карпович, 2024): «Ռուսաստանից տարիներ շարունակ ստացված մեծահոգությանն ու պաշտպանությանն ի պատասխան՝ դուք չճանաչեցիք Ղրիմը: Երկիրը հեղեղեցինք հակառուսական ՀԿ-ներով...» (Simonyan, 2020):

«Փաշինյան, կարող ես ֆրանսիացիների հետ համբուրվել, որոնք դավաճանեցին Ղարաբաղը, բայց հրաժարվեք հողերից, որոնք Լենինի շնորհիվ եք ստացել, հրաժարվեք Արարատից...» (Акопян, 2023) «2018-ին, Փաշինյանն իշխանության եկավ հստակ նպատակով. Հայաստանը կտրել Ռուսաստանից և շարժվել դեպի Արևմուտք» (Izvestia, 2024): «Դժբախտաբար, արևմտյան խոսույթների ազդեցությամբ [...] Երևանում գնալով ավելի լսելի է դառնում Ռուսաստանի, ՀԱՊԿ-ի և առկա անվտանգության համակարգի նկատմամբ անհիմն քննադատությունը: Սա, առնվազն, ոչ կառուցողական և կարեատես է» (Воробьев, 2024): «...Երևանը լրացուցիչ դժվարություններ է հարուցում Ռուսաստանի համար Հարավային Կովկասում, ինչը միայն զայրացնում է Մոսկվային: Հակառուսական պատժամիջոցները շրջանցելու համար միջանցք դառնալու և դրանից ֆինանսական շահ քաղելու փոխարեն՝ Երևանը, Արևմուտքին հրավիրելով, հակված է միանգամից արժանանալ տարածաշրջանի բոլոր դերակատարների դժգոհությանը. Ռուսաստան, Իրան և Թուրքիա, ընդգծում է փորձագետը» (Хамова, 2024): «...հուսով է, որ Երևանը Մոսկվայի հետ հարաբերություններում չի ընտրի Կիևի ռեժիմի ուղին...» (Известия, 2024): «...Սա ներքին և արտաքին քաղաքականության ձախողումների պատասխանատվությունից խուսափելու ակնհայտ փորձ է՝ մեղքը Մոսկվայի վրա գցելով: Արևմուտքի ներշնչած և պաշտոնական Երևանի խթանած՝ Փաշինյանի վերջին հայտարարությունները դրվագային չեն, այլ համակարգային բնույթ ունեն» (Министерство иностранных дел Российской Федерации, 2023): «...փորձելով կործանել Հայաստանի և Ռուսաստանի միջև եղած բազմակողմանի և դարավոր կապերն ու երկիրը դարձնել Արևմուտքի աշխարհաքաղաքական խաղերի պատանդ...» (Министерство иностранных дел Российской Федерации, 2023): «Այսօր մեր զինված ուժերը տարածաշրջանում խաղաղության ապահովման հիմնական տարրն են: Վերջերս Երևանը համագործակցություն էր զարգացնում ՆԱՏՕ-ի հետ [...] Սա միայն մեր մտահոգությունն է առաջացնում: Մենք բազմիցս մեր հայ գործընկերների ուշադրությունն ենք հրավիրել [...] Հուսամ՝ Երևանը տեղյակ է...» (Министерство иностранных дел Российской Федерации, 2024): «...ԵՄ առաքելության վերաբերյալ հայ հասարակությունում կոնսենսուս

կար: Խոստացված էր երկու ամսով, սակայն հիմա անորոշ է: Կանադացիներն ու ՆԱՏՕ այլ անդամներ արդեն ցանկանում են գնալ այնտեղ: Սա այլևս ԵՄ առաքելություն չէ: Սա ՆԱՏՕ առաքելություն է» (Министерство иностранных дел Российской Федерации, 2023):

«Ակներևաբար, Հայաստանի իշխանությունները մոռացել են, որ երկրի բարգավաճումը մեծապես կախված է եղել Ռուսաստանի հետ համագործակցության արդյունքում ստացված օգուտներից... Սրանք իրական թվեր և փաստեր են, ի տարբերություն Արևմուտքի արած շատ դատարկ հայտարարությունների և խոստումների» (Министерство иностранных дел Российской Федерации, 2024): «...Ձեր փաստարկները դրեք սեղանին, առանց հիստերիայի և վիրավորանքների» (Министерство иностранных дел Российской Федерации, 2024): ...Այս քայլը կարող է դիտվել միայն որպես զիջում նրանց աչքին, ովքեր գնալով ավելի են բարձրաձայնում Ռուսաստանի և Հայաստանի միջև եղած ավանդական, փոխշահավետ և փոխհարգալից դաշնակցային հարաբերությունների խզման օգտին» (Посольство Российской Федерации в Армении, 2023):

Վերոնշյալ օրինակները զգացմունքային խոսույթներ են: Կրեմլի հռետորներն ուղղակիորեն ասում են. «Ձեր փաստարկները դրեք սեղանին, առանց հիստերիայի և վիրավորանքների»-ն մեղադրանք է Հայաստանի իշխանություններին՝ սեփական ժողովրդի շահերին դավաճանելու և Կրեմլի դեմ գործելու մեջ. «իշխանության եկավ հստակ նպատակով. Հայաստանը կտրել Ռուսաստանից և շարժվել դեպի Արևմուտք»:

Համարվում է, որ Հայաստանի իշխանություններն ընկել են Արևմուտքի ազդեցության տակ՝ «արևմտյան խոսույթների ազդեցության պատճառով», «ներշնչվել են Արևմուտքից» և Արևմուտքի կողմից օգտագործվում են Ռուսաստանի դեմ: Մյուս կողմից, խթանվում էր այն գաղափարը, որ Հայաստանն ինքը հնարավոր ամեն ինչ անում է, որ Արևմուտքն իրեն աջակցի («Երևանը հրավիրում է Արևմուտքին»): Այստեղ ականատես ենք լինում սպառնալիքների լեզվին. «Հայաստանը կրկնում է Ուկրաինայի ուղին» կամ «Կարող է պարզվել, որ Փաշինյանի և իր թիմի՝ ուկրաինա-մոլդովական ուղուն հետևելու փորձերը... շատ ավելի ծանր հետևանքներ ունենան Հայաստանի համար»: Սա ակնարկ է, որ Ռուսաստանը նույն ագրեսիվ և ուժային քաղաքականությունը կկիրառի Հայաստանի նկատմամբ, եթե այն եվրոպական ինտեգրման քաղաքականությունից չհրաժարվի: Կամ՝

«ակներևաբար, Հայաստանի իշխանությունները մոռացել են...», կամ՝ «բայց հրաժարվեք ամեն ինչից, հրաժարվեք հողերից, որոնք Լենինի շնորհիվ եք ստացել, հրաժարվեք Արարատից...», կամ՝ «Ռուսաստանից տարիներ շարունակ ստացված մեծահոգությանն ու պաշտպանությանն ի պատասխան՝ դուք չճանաչեցիք Ղրիմը»: Կրեմլի այս հռետորաբանությունն ինքնին խոսուն է:

Ինչ-որ մեկը կարող է առարկել, որ բնական է, որ Կրեմլի պաշտոնյաները կարող են ծայրահեղ բացասական վերաբերմունք դրսևորել Հայաստանի՝ Արևմուտքի հետ սերտ հարաբերություններ հաստատելու փորձերի հանդեպ՝ ելնելով այն փաստից, որ Ռուսաստանը ներգրավված է Արևմուտքի հետ հակամարտությունում: Այնուամենայնիվ, խնդիրն ավելի խորն է: Խնդիրը միայն այն չէ, որ Կրեմլը դժգոհ է այն փաստից, որ Հայաստանը շեղվում է իր աշխարհաքաղաքական մրցակցի կողմը: Այս հայտարարությունների ոճն ու բովանդակությունը ցույց են տալիս, որ Հայաստանի վերաբերյալ Կրեմլի պաշտոնյաների մտածելակերպը հիմնված է այն գաղափարի վրա, որ երկիրը չպետք է և չի կարող ունենալ անկախ արտաքին քաղաքականություն, առնվազն՝ երբ այդ քաղաքականությունը հակասում է Ռուսաստանի շահերին: Սա հատկապես հստակ է դառնում, երբ համեմատում ենք Կրեմլի արձագանքը Արևմուտքին մոտենալուն ուղղված՝ Հայաստանի բավական երկչոտ քայլերին՝ Թուրքիայի և Ադրբեջանի առնչությամբ Ռուսաստանի վարած քաղաքականության հետ. երկրների, որոնք տասնամյակներ շարունակ բաց հակամարտության մեջ են եղել Հայաստանի հետ: Կրեմլի պաշտոնյաները չեն թաքցնում այն փաստը, որ Ադրբեջանին համարում են մերձավոր դաշնակից՝ մեջբերելով 2022-ի Դաշնակցային համագործակցության հռչակագիրն ու նմանատիպ փաստաթղթեր: Ռուս-ադրբեջանական համագործակցությունը ներառել է քաղաքական, ռազմական, տնտեսական և այլ կողմեր, ներառյալ՝ 2020-ի ղարաբաղյան պատերազմի նախօրեին Ադրբեջանին զանգվածային զենքերի մատակարարումը: Ռուս-թուրքական համագործակցությունը ևս բավական նշանակալի է, ներառյալ՝ էներգետիկ ոլորտը (ռուսական միջուկային գործակալությունը միջուկային ռեակտոր է կառուցում Թուրքիայում), ռազմական ոլորտը (Ռուսաստանի S-400 հակաօդային համակարգերի վաճառքը Թուրքիային) և այլ ոլորտներ: Ակներևաբար, չնայած այն փաստին, որ Հայաստանը ենթադրաբար Ռուսաստանի դաշնակիցն է, դա Ռուսաստանին որևէ կերպ չի խանգարում սերտ հարաբերություններ ունենալ այս երկրների հետ: Ադրբեջանի հետ Ռուսաստանը նույ-

նիսկ ձևավորել է ռազմավարական դաշինք: Ավելին, ինչպես տեսանք, որոշ ռուս պաշտոնյաներ պարծենում են այն փաստով, որ Ռուսաստանը «տարածաշրջանի և աշխարհի միակ երկիրն է, որը դաշնակցային հարաբերություններ ունի թե՛ Հայաստանի, թե՛ Ադրբեջանի հետ»: Սակայն Հայաստանի շատ ավելի համեստ փորձերը՝ դիվերսիֆիկացնել իր արտաքին քաղաքականությունը և Ռուսաստանի կողմից ոչ բարեկամական համարվող երկրների հետ հարաբերություններ զարգացնել, բախվում են կոշտ արձագանքների, վիրավորանքների և սպառնալիքների: Ինչպես կասեին մեկ այլ կայսրությունում՝ «quod licet Iovi, non licet bovi»:[13]

13 Լատիներենից՝ «Այն, ինչ թույլատրվում է Յուպիտերին, չի թույլատրվում ցլին»:

5. Ամփոփում

Ինչպես տեսնում ենք, Հայաստանի առնչությամբ Մոսկվայի հռետորաբանությունն ունի գաղութացման և նեոգաղութացման տարրեր: Այն արտացոլում է այնքան բացահայտորեն արտահայտված գերիշխանության գաղափարախոսություն, որ հաճոյախոսությունների կարժանանար 19-րդ դարի եվրոպական գաղութատիրության ջերմեռանդ ներկայացուցիչների կողմից: Գլոբալ հարավի երկրներին, ինչպես նաև արևմտյան երկրների հանրության որոշակի հատվածներին հասցեագրված Կրեմլի ուղերձում այն պայքարում է գաղութատիրության, կայսերապաշտության, Արևմուտքի գլոբալ գերիշխանության և այլնի դեմ, մինչդեռ Հայաստանի դեպքը ցույց է տալիս, որ Կրեմլի՝ հետխորհրդային երկրներին հասցեագրված ուղերձը միանգամայն այլ է: Խոսքը տարածաշրջանում Ռուսաստանի պատմականորեն բացառիկ դիրքի, ենթադրաբար՝ խոր պատմական կապերի մասին է, ինչն արդարացնում է Ռուսաստանի գերիշխանությունն այս տարածաշրջանում: Ռուսաստանի գերիշխանությունն ընդունելուց հրաժարվելու դեպքում՝ Կրեմլի ուղերձները պարունակում են քողարկված կամ միանգամայն բացահայտ սպառնալիքներ: Ականատես ենք լինում այն գաղափարի մերժմանը, որ հետխորհրդային երկրները կարող են լինել սուբյեկտ և որոշել սեփական ճակատագիրը՝ Ռուսաստանի փոքր գործընկերները լինելու փոխարեն, Ռուսաստանի՝ իր և իր նախկին գաղութների համար ընտրած լավագույն կուրսի շրջանակներում:

Այս հռետորաբանությունը կիրառվել է մի համատեքստում, որտեղ հետխորհրդային Հայաստանը հայտնվում է Ռուսաստանի քաղաքական, ռազմական, տնտեսական և մշակութային ազդեցության տակ: Այս նարատիվները կարևոր գործոն են, որն այսօր օժանդակում է Հայաստանի վերաբերյալ Ռուսաստանի (նեո)գաղութային քաղաքականությունը: Ինչպես ցույց տվեց մեր հետազոտությունը, դիսկուրսը պարունակում է որոշ հիմնական տարրեր, որոնք վերլուծվել են այս հետազոտության մեջ.

- Ռուսաստանի՝ Հայաստանում ազդեցություն ունենալու և վերահսկելու պատմական իրավունքը,
- Ռուսաստանի պնդումը՝ լինել խաղաղարար, խաղաղության և անվտանգության միակ երաշխավորը,
- Ռուսաստանից Հայաստանի տնտեսական կախվածության արդարացումն ու պնդումը, որ այս կախվածությունը շահավետ է Հայաստանի համար

- Պնդումը, որ այլ աշխարհաքաղաքական դերակատարներ (հատկապես՝ Արևմուտքը) իրավունք չունեն ներգրավված լինելու Հայաստանում, և Ռուսաստանի բացառիկ դերի պնդումը (պնդում, որը ենթադրում է Հայաստանի և հայերի սուբյեկտայնության պակաս),
- Հայերի «երախտամոռության» մեղադրանքներ՝ Ռուսաստանից կախվածությունը նվազեցնելու՝ Հայաստանի կառավարության և հանրության փորձերը հիշատակելիս:

Հայաստանի առնչությամբ՝ Ռուսաստանի պաշտոնական և կիսապաշտոնական դիսկուրսի վերլուծությունը ցույց է տալիս, որ այս դիսկուրսն ընդգրկում է բոլոր այս տարրերը: Հայաստանի կառավարության և հասարակության հետ հաղորդակցվելիս ռուսական սերուցքը բավական անկեղծ է. նրանք նույնիսկ չեն փորձում թաքցնել իրենց դիրքորոշումը. Հայաստանն անկախ, ինքնիշխան երկիր չէ, այլ Ռուսաստանի հետաքրքրության շրջանակի, ռուսական ծայրամասի, այսպես ասած՝ Ռուսաստանի սեփական ետնաբակի մաս է: Այս անկեղծությունը հատկապես աչքի է զարնում Գլոբալ հարավին և արևմտյան հանրության մի մասին ուղղված՝ Կրեմլի քարոզչական ջանքերի ֆոնին, երբ այն փորձում է այսօրվա Ռուսաստանը ներկայացնել որպես գլոբալ կայսերապաշտության և գաղութատիրության դեմ պայքարի առաջամարտիկ: Կրեմլը, որն ամենաշատն է կիրառել «երկակի ստանդարտների» գաղափարը, երբ խոսքը Արևմուտքի, մասնավորապես՝ Գլոբալ հարավի երկրների դեմ քարոզչական պատերազմին է վերաբերում, հենց ինքն է երկակի ստանդարտներ կիրառում:

Հաշվի առնելով ասվածը՝ ակնհայտ է դառնում, որ Ռուսաստանի ժամանակակից ղեկավարությունը Հայաստանի, ինչպես նաև այլ հետխորհրդային երկրների նկատմամբ (նեո)գաղութային քաղաքականություն է վարում: Այս քաղաքականությանը հակազդելու նպատակով՝ կարող են արվել հետևյալ առաջարկությունները.

- Կարևոր է, որ քաղաքական գործիչները, մեդիա, փորձագիտական համայնքը և հասարակական ըմբռնումները ձևավորող այլ խմբեր քննեն Մոսկվայի ընթացիկ քաղաքականության բնույթը, մասնավորապես դիտարկեն նրա գաղութային և նեոգաղութային բնույթը:

- Միջազգային կազմակերպությունները, դոնորները և այլ շահագրգիռ կողմեր օժանդակեն Հայաստանի կառավարությանը, մեդիային, քաղաքացիական հասարակությանն ու այլ դերակատարների՝ Կրեմլի (նեո)գաղութային քաղաքականությանը հակազդելու համար, ներառյալ՝ ապատեղեկատվական արշավներն ու հակաժողովրդավարական քարոզչությունը:
- Հետխորհրդային տարածքում խրախուսել Ռուսաստանի գաղութատիրությանն ու նեոգաղութացմանը վերաբերող հարցերի հետազոտությունները և քննարկումները, ինչպես նաև հետխորհրդային հասարակությունների հետգաղութային ժառանգության հետազոտությունը Հայաստանում, ինչպես նաև հետխորհրդային այլ երկրներում:
- Դյուրացնել գիտնականների, լրագրողների, ակտիվիստների և սոցիալական մեդիա ինֆլյուենսերների ցանցի ստեղծումը հետխորհրդային երկրներում, որոնք հետաքրքրված են (նեո)գաղութացման, հետգաղութացման և ապագաղութացման հարցերով և ցանկանում են հակազդել Մոսկվայի քարոզչությանն ու ապատեղեկատվական արշավներին:
- Դյուրացնել հետխորհրդային և Գլոբալ Հարավի (հատկապես՝ Մոսկվայի «հակագաղութային» քարոզչությունից տուժած) երկրների գիտնականների, ակտիվիստների, լրագրողների և ինֆլյուենսերների հաղորդակցությունը՝ Մոսկվայի՝ հետխորհրդային երկրների առնչությամբ (նեո)գաղութային քաղաքականության, հռետորաբանության, ապատեղեկատվության և քարոզչության մասին տեղեկություն տարածելու նպատակով:
- Նմանատիպ կապեր հաստատել հետխորհրդային երկրների գիտնականների, ակտիվիստների և այլ դերակատարների և արևմտյան ակադեմիական շրջանակների, քաղաքական ուժերի և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների միջև, որոնք հետաքրքրված են ապագաղութացման և հետգաղութացման խնդիրներով:

6. Գրականության ցանկ

- 1tv.ru (2024, մայիսի 27). *Большая игра. Часть 3. Выпуск от 27.05.2024 [հայերեն. Մեծ խաղ. Մաս 3. Թողարկում 27.05.2024 թ.]*. 1tv.ru. https://www.1tv.ru/shows/big-game/vypuski/bolshaya-igra-chast-3-vypusk-ot-27-05-2024
- Antonyan, D. (2024, ապրիլի 30). *Armenia's Foreign Policy Diversification Amid New Geopolitical Realities*. APRI Institute. https://apri.institute/armenias-foreign-policy-diversification-amid-new-geopolitical-realities/
- *Avedissian, K. (2015, հուլիսի 6). The power of Electric Yerevan*. openDemocracy. https://www.opendemocracy.net/en/odr/electrified-yerevan/
- Бойков, С. и Леонова, Ю. (2024, ապրիլի 17). *Бремя ухода: почему российские миротворцы покидают Нагорный Карабах [հայերեն. Հեռանալու բեռը. ինչու են ռուս խաղաղապահները հեռանում Լեռնային Ղարաբաղից]*. Iz.ru. https://iz.ru/1683785/semen-boikov/bremia-ukhoda-pochemu-rossiiskie-mirotvortcy-pokidaiut-nagornyi-karabakh
- Дробынин, А. (2024, հունվարի 26). *Неоколониализм и наша борьба с ним [հայերեն. Նեոգաղութատիրությունը և մեր պայքարը դրա դեմ]. The International Affairs.* https://interaffairs.ru/news/show/44348
- Edwards, M. (2018, հոկտեմբերի 15). *Armenia's Post-Revolution Party Is Over*. Foreign Policy Magazine. https://foreignpolicy.com/2018/10/15/the-counterrevolution-is-coming-to-armenia/
- Gavin, G. (2024, սեպտեմբերի 18). *Russia tried to stage coup in Armenia, prosecutors allege*. Politico. https://www.politico.eu/article/russia-stage-violent-coup-armenia-investigation-allegiation/
- Ghazaryan, A. and Tolosa, G. (2013). *Remittances in Armenia: Dynamic Patterns and Drivers*. IMF. https://www.imf.org/external/country/arm/rr/2012/062012.pdf
- Gotev, G. (2013, սեպտեմբերի 4). *EU loses Armenia to Russia's Customs Union*. Euractiv. http://www.euractiv.com/section/europe-s-east/news/eu-loses-armenia-to-russia-s-customs-union/

- Акопян, Г. (2023, հոկտեմբերի 8). *«Пашинян продал Карабах», «Иуда, предавший свой народ», «Почему наши парни с оружием защищают карабахцев?». Высказывания, прозвучавшие в эфире российских каналов [հայերեն. «Փաշինյանը ծախեց Ղարաբաղը», «Հուդա, որ դավաճանեց իր ժողովրդին», «Ինչո՞ւ են զենքով մեր տղաները պաշտպանում Ղարաբաղի ժողովրդին». Ռուսական ալիքներով արված հայտարարություններ].* Aravot Daily.
https://ru.aravot.am/2023/10/08/421797/

- Hetq.am (2015, սեպտեմբերի 30). *Tashir Group to Acquire Electric Energy Assets of Inter RAO in Armenia*. Hetq.am.
https://hetq.am/en/article/62876

- Известия (2024, հունիսի 4). *Политолог заявил о повторении Арменией пути Украины [հայերեն. Քաղաքագետը հայտարարեց, որ Հայաստանը կրկնելու է Ուկրաինայի ճանապարհը].* Известия.
https://iz.ru/1722490/2024-07-04/politolog-zaiavil-o-povtorenii-armeniei-puti-ukrainy

- Карпович, О. (2024, ապրիլի 19). *Раскачали горы [հայերեն: Շարժեցին սարերը].* Известия.
https://iz.ru/1684873/oleg-karpovich/raskachali-gory

- Хамова, Е. (2024, հունիսի 12). *Выходной билет: решится ли Армения покинуть ОДКБ [հայերեն. Ելքի տոմս. Հայաստանը կորոշի՞ դուրս գալ ՀԱՊԿ-ից].* Известия.
https://iz.ru/1711677/ekaterina-khamova/vykhodnoi-bilet-reshitsia-li-armeniia-pokinut-odkb

- Хамова, Е. (2024, հունիսի 22). *Ереван-чай: зачем Армении референдум о евроинтеграции [հայերեն. Երևան-թեյ. Հայաստանի ինչի՞ն է պետք եվրաինտեգրման հանրաքվեն].* iz.ru.
https://iz.ru/1716191/ekaterina-khamova/erevan-chai-zachem-armenii-referendum-o-evrointegratcii

- Khulian, A. (2024, օգոստոսի 16). *Armenia Edits History Textbook after Russian Backlash*. Azatutyun.am.
https://www.azatutyun.am/a/33081494.html

- Kucera, J. (2018, փետրվարի 8). *Armenians responded by vigorous defenses that mostly glossed over the liberation hero's alliance with the Third Reich*. Eurasianet.
https://eurasianet.org/russia-picks-fight-with-armenia-over-nazi-collaboration

- Маркедонов, С. (2024, ապրիլի 15). *Европейские берега [հայերեն. Եվրոպական ափեր]*. Известия.
https://iz.ru/1680739/sergei-markedonov/evropeiskie-berega

- Министерство иностранных дел Российской Федерации (2023, սեպտեմբերի 10). *Выступление и ответы на вопросы СМИ Министра иностранных дел Российской Федерации С.В.Лаврова по итогам саммита «Группы двадцати», Нью-Дели, 10 сентября 2023 года [հայերեն. Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովի ելույթը և լրատվամիջոցների հարցերին պատասխանները G20 գագաթնաժողովի արդյունքներով, Նյու Դելի, 10 սեպտեմբերի, 2023 թ.]*. Министерство иностранных дел Российской Федерации.
https://www.mid.ru/ru/foreign_policy/news/1903728/

- Министерство иностранных дел Российской Федерации (2023, սեպտեմբերի 25). *Заявление МИД России в связи с посланием Премьер-министра Республики Армения Н.В.Пашиняна и ситуацией вокруг Нагорного Карабаха [հայերեն. ՌԴ արտաքին գործերի նախարարության հայտարարությունը ՀՀ վարչապետ Ն.Վ.Փաշինյանի ուղերձի և Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված իրավիճակի առնչությամբ]*. Министерство иностранных дел Российской Федерации.
https://www.mid.ru/ru/foreign_policy/news/1906229/

- Министерство иностранных дел Российской Федерации (2023, սեպտեմբերի 27). *Из интервью Министра иностранных дел России С.В.Лаврова информационному агентству ТАСС, Москва, 27 сентября 2023 года [հայերեն. ՌԴ ԱԳ նախարար Ս.Վ. Լավրովի հետ հարցազրույցից ՏԱՍՍ լրատվական գործակալությանը, Մոսկվա, 27 սեպտեմբերի, 2023 թ.]*. Министерство иностранных дел Российской Федерации.
https://www.mid.ru/ru/foreign_policy/news/1906590/

- Министерство иностранных дел Российской Федерации (2023, հոկտեմբերի 26). *Брифинг официального представителя МИД России М.В.Захаровой, Москва, 26 октября 2023 года [in EnglishBriefing by the official representative of the Russian MFA M.V. Zakharova, Moscow, October 26, 2023]*. Ministry of Foreign Affairs of the Russian Federation.
https://www.mid.ru/ru/foreign_policy/news/1912059/#15

- Министерство иностранных дел Российской Федерации (2023, դեկտեմբերի 14). *Комментарий официального представителя МИД России М.В.Захаровой относительно процесса армяно-азербайджанской нормализации [հայերեն. ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մ.Վ. Զախարովայի մեկնաբանությունը հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման գործընթացի վերաբերյալ].* Министерство иностранных дел Российской Федерации. https://www.mid.ru/ru/foreign_policy/news/1921246/
- *Министерство иностранных дел Российской Федерации (2024, հունվարի 12). Брифинг официального представителя МИД России М.В.Захаровой, Москва, 12 января 2024 года [հայերեն. ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մ.Վ. Զախարովայի ճեպազրույցը, Մոսկվա, 12 հունվարի, 2024 թ.]. Министерство иностранных дел Российской Федерации.* https://mid.ru/ru/press_service/video/brifingi/1925275/#14
- Министерство иностранных дел Российской Федерации (2024, փետրվարի 7). *Брифинг официального представителя МИД России М.В.Захаровой, Москва, 7 февраля 2024 года [հայերեն. ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մ.Վ. Զախարովայի ճեպազրույցը, Մոսկվա, 7 փետրվարի, 2024 թ.].* Министерство иностранных дел Российской Федерации. https://www.mid.ru/ru/foreign_policy/news/1930002/#024
- Министерство иностранных дел Российской Федерации (2024, մարտի 3). *Брифинг официального представителя МИД России М.В.Захаровой, Сочи, 6 марта 2024 года [հայերեն. ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մ.Վ. Զախարովայի ճեպազրույցը, 6 մարտի, 2024 թ.].* Министерство иностранных дел Российской Федерации. https://www.mid.ru/ru/foreign_policy/news/1937138/#023
- Министерство иностранных дел Российской Федерации (2024, ապրիլի 19). *Интервью Министра иностранных дел Российской Федерации С.В.Лаврова радиостанциям «Спутник», «Говорит Москва» и «Комсомольская правда», Москва, 19 апреля 2024 года [հայերեն. Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարար Ս.Վ. Լավրովի հարցազրույցը «Спутник», «Говорит Москва» և «Комсомольская правда» ռադիոկայաններին, Մոսկվա, 19 ապրիլի, 2024 թ.].* Министерство иностранных дел Российской Федерации. https://seychelles.mid.ru/ru/press-centre/news/intervyu_ministra_inostrannykh_del_rossiyskoy_federatsii_s_v_lavrova_radiostantsiyam_sputnik_govorasd/

- Министерство иностранных дел Российской Федерации (2024, հունիսի 9). *Ответ официального представителя МИД России М.В.Захаровой на вопрос СМИ в связи с недружественными шагами представителей Еревана [հայերեն. ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մ.Վ. Զախարովայի պատասխանը Երևանի ներկայացուցիչների անբարյացակամ քայլերի հետ կապված լրատվամիջոցների հարցին].* Министерство иностранных дел Российской Федерации. https://www.mid.ru/ru/foreign_policy/news/1955185/
- News.am (2018, դեկտեմբերի 25). *Armenia March 2008 case defendant Mikayel Harutyunyan is Russia citizen.* News.am. https://news.am/eng/news/487988.html
- OC Media (2018, օգոստոսի 2). *Armenia reassures Russia after criticism from Lavrov.* Open Caucasus Media. https://oc-media.org/armenia-reassures-russia-after-criticism-from-lavrov/
- Panossian, R. (2006) *The Armenians: From kings and priests to merchants and commissars*. Columbia University Press.
- Регнум (2004, դեկտեմբերի 15). *Борис Грызлов: Армения является форпостом России на Южном Кавказе [հայերեն. Բորիս Գրիզլով. Հայաստանը Ռուսաստանի ֆորպոստն է Հարավային Կովկասում].* Регнум. https://regnum.ru/news/376296
- Риа Новости (2018, հուլիսի 31). *События в Армении идут вразрез с заявлениями властей страны, отметил Лавров (հայերեն. Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունները հակասում են երկրի իշխանությունների հայտարարություններին, նշել է Լավրովը).* Риа Новости. https://ria.ru/20180731/1525699539.html
- Риа Новости (2024, հունվարի 19). *Сергей Копыркин: стратегические интересы России и Армении сходятся [հայերեն. Սերգեյ Կոպիրկին. Ռուսաստանի և Հայաստանի ռազմավարական շահերը համընկնում են].* Риа новости. https://ria.ru/20240119/kopyrkin-1922275495.html
- *Rousseau, J. (2021). The social contract. Arcturus Publishing.*
- Sabanadze, N. (2024). Russia is using the Soviet playbook in the Global South to challenge the West – and it is working. Chatham House. https://www.chathamhouse.org/2024/05/russia-using-soviet-playbook-global-south-challenge-west-and-it-working
- Simonyan, M. [@margaritasimonyan] (2020, July 18). Telegram. Դիտված է դեկտեմբերի 2, 2024, https://t.me/margaritasimonyan/6567

- Simonyan, M. [@margaritasimonyan] (2022, October 30). Telegram. Դիտված է December 2, 2024,
https://t.me/margaritasimonyan/12395
- Simonyan, M. [@margaritasimonyan] (2023, March 14). Telegram. Դիտված է դեկտեմբերի 2, 2024,
https://t.me/margaritasimonyan/12755
- Simonyan, M. [@margaritasimonyan] (2023, July 13). Telegram. Դիտված է դեկտեմբերի 2, 2024,
https://t.me/margaritasimonyan/13105
- Suny, R. (1993). Looking toward Ararat: *Armenia in modern history.* Indiana University Press.
- Tass.ru (2024, օգոստոսի 8). *Захарова назвала голословными заявления США о желании Армении отвернуться от РФ [հայերեն. Զախարովան անհիմն է անվանել ԱՄՆ-ի հայտարարությունները Հայաստանի՝ Ռուսաստանի Դաշնությունից շրջվելու ցանկության մասին].* Tass.ru.
https://tass.ru/politika/21557237
- Telegeography (2015, մարտի 15). UCOM readies Orange Armenia re-branding. Telegeography.
https://www.telegeography.com/products/commsupdate/articles/2016/03/15/ucom-readies-orange-armenia-re-branding/
- Посольство Российской Федерации в Армении (2023, դեկտեմբերի 21). *Комментарий Посольства России в Армении в связи с решением Комиссии по телевидению и радио РА о приостановке вещания радио «Sputnik Армения» [հայերեն. ՀՀ-ում ՌԴ դեսպանատան մեկնաբանությունը՝ Sputnik Արմենիա ռադիոյի հեռարձակումը դադարեցնելու՝ ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի որոշման վերաբերյալ].* Посольство Российской Федерации в Армении.
https://armenia.mid.ru/ru/press-centre/news/kommentariy_posolstva_rossii_v_armenii_v_svyazi_s_resheniem_komissii_po_televideniyu_i_radio_ra_o_pr/
- Վարդանյան, Է. (2018). *Արդարացումից դեպի դատապարտում.մինչհեղափոխական և հետհեղափոխական իշխող քաղաքական վերնախավերի շրջանում առկա մոտեցումները Հայաստանի սովետական անցյալի նկատմամբ:* Open Society Foundations Armenia.
https://bit.ly/41wJCxB

- Воробьев, Вл. (2024, հունիսի 17). *«Русская речь снова будет звучать беспрепятственно»: Замглавы МИД РФ Михаил Галузин - об Армении, грузинской мечте и защите русского языка [հայերեն. «Ռուսերեն խոսքը կրկին անկաշկանդ կհնչի». ՌԴ փոխարտգործնախարար Միխայիլ Գալուզինը Հայաստանի, վրացական երազանքի և ռուսաց լեզվի պաշտպանության մասին.]*. Комсомольская правда. https://www.kp.ru/daily/27595/4947009/
- de Waal, Th. (2024, հուլիսի 11). *Armenia Navigates a Path Away From Russia*. Carnegie Europe. https://carnegieendowment.org/research/2024/07/armenia-navigates-a-path-away-from-russia?lang=en&center=russia-eurasia
- Zolyan, M. (2018, July 25). *Analysis | Can 'New Armenia' disentangle democratic change from geopolitics?* Open Caucasus Media (OC Media). https://oc-media.org/features/analysis-can-new-armenia-disentangle-democratic-change-from-geopolitics/
- Zolyan, M. (2023, November 27). *Defeated Armenia Looks to a New, Post-Russia Foreign Policy*. Carnegie Politika. https://carnegieendowment.org/russia-eurasia/politika/2023/11/defeated-armenia-looks-to-a-new-post-russia-foreign-policy?lang=en
- Zolyan, M. (2023). *Three Republics of Armenia: The Soviet Past and the Politics of Memory in Post-Soviet Armenia (1991–2018)*. Caucasus Survey. 2023 May 12; 1:1-24.

7. Հեղինակների մասին

Էդգար Վարդանյանը քաղաքագետ է, քաղաքական մեկնաբան և անկախ հետազոտող: Նրա հետաքրքրության ոլորտներն ընգրկում են ժողովրդավարության տեսությունը, ժողովրդավարացման գործընթացները, քաղաքացիական հասարակությունը, պոպուլիզմը, ապատեղեկատվությունը և մեդիա մանիպուլյացիաները, Հայաստանի ներքին և արտաքին քաղաքականությունը: Նա այս թեմաներով մի քանի ուսումնասիրությունների և հոդվածների հեղինակ է: Էդգար Վարդանյանը, որպես անկախ քաղաքական վերլուծաբան և հետազոտող, համագործակցել է շատ հայկական և միջազգային ՀԿ-ների և հիմնադրամների հետ: Նա նաև հանդիսացել է հեռուստահաղորդավար և Բուն TV-ի վերլուծաբան: Ներկայումս հետազոտություն է իրականացնում Ռուսաստանի պետական քարոզչական խոսույթների, Հայաստանում անվտանգության խնդիրների հանրային ընկալումների վերաբերյալ և լիբերալ ժողովրդավարության և պոպուլիզմի դասախոսություններ է կարդում զանազան քաղաքացիական կրթական ծրագրերում:

Միքայել Զոլյանը պատմաբան է, քաղաքական վերլուծաբան և նախկին քաղաքական գործիչ, ինչպես նաև հայկական մեդիայի ներկայիս իրողությունների քաղաքական մեկնաբան: Նա նույնպես հեռուստահաղորդավար է հայկական կրթական Բուն TV ալիքում:

Նրա փորձագիտության ոլորտներն ընդգրկում են հիշողության քաղաքականությունը, ազգայնականությունը, ազգային ինքնությունը, արտաքին քաղաքականությունը և տարածաշրջանային հակամարտությունը, ինչպես նաև հետխորհրդային համատեքստում սոցիալական և քաղաքական շարժումներն ու ժողովրդավարացումը: Այս թեմաներով նա բազմաթիվ վերլուծական և ակադեմիական հրապարակումների հեղինակ է:

SCAN ME

9 789939 120058

freiheit.org